



Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ

**Օրհուս կենտրոնների
կայունության զարգացման
ծրագրի շրջանակներում
իրականացված**

**ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Երևան, փետրվար 2011թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ</i>	3
<i>ՆԱԽԱՊԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</i>	4
Նախագծի նախապատմությունը.....	4
Նախագծի խնդիրները.....	5
Իրականացված գործունեությունը.....	5
<i>ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ</i>	7
Ընդհանուր ակնարկ	7
Կենտրոնների դերը Հայաստանում	7
Օրհուս կենտրոնի առաքելությունը	8
Ընդհանուր պատկերը	10
Կառավարման դրույթները.....	11
Փորձագետների խորհուրդը.....	12
Համակարգողի գործոնը.....	13
Կազմակերպչական զարգացման ասպեկտները	15
Պլանավորումը եւ որոշումների ընդունումը	15
Մարդկային ռեսուրսներ եւ պահանջներ	15
Դրամահավաք գործունեություն	17
Հասարակության եւ լրատվամիջոցների հետ կապերը.....	17
Հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ	19
Համագործակցությունը պետական կառույցների հետ	19
<i>Հարաբերությունները տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ</i>	19
<i>Համագործակցությունը Բնապահպանության նախարարության հետ</i>	22
Համագործակցությունը ՀԿ-ների եւ միջազգային կազմակերպությունների հետ ...	23
ԵԱՀԿ-ի դերը.....	26
Հետագա զարգացում	28
Կենտրոնների ապագայի տեսլականը.....	28
Իրավական կարգավիճակը.....	29
Հոգաբարձուների խորհուրդ	31
Կառուցվածքը	32
Ֆինանսական աղբյուրները	33
Շահագրգիռ կողմերի դերը.....	34
<i>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	36
Իրավական կարգավիճակը եւ Խորհրդի կազմը	36
Պլանավորում եւ կառավարում	37
Մարդկային եւ նյութական ռեսուրսներ.....	38
Ֆինանսավորման աղբյուրներ եւ դրամահավաք	39
Հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ	40
Աշխատանքի շրջանակները	41
<i>ՀԱՎԵԼ ՎԱԾ</i>	43
Հարցվողների ցուցակ	43

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՀՀ	Բնության համաշխարհային հիմնադրամ (WWF)
ԲՆ	ՀՀ Բնապահպանության նախարարություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
ԿԶ	Կազմակերպական զարգացում
ՀԽ	Հոգաբարձուների խորհուրդ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀԿ	Հասարակայնության հետ կապեր (PR)
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրեր (UNDP)
ՄԱԿ ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
ՄՌ	Մարդկային ռեսուրսներ
ՇՄՀՀ	Շրջակա միջավայրի համաշխարհային հիմնադրամ (GEF)
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿՆ	ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՔԶՀՀ	Քաղաքացիական զարգացման եւ համագործակցության հիմնադրամ

Նախագծի նախապատմությունը

ՀՀ Բնապահպանության նախարարության եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի միջեւ ստորագրված փոխըմբռնման հուշագրի համաձայն, սկսած 2002թ.-ից Էկոլոգիական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնները մեկնարկեցին իրենց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում:

Մինչ այժմ Հայաստանի տարբեր մարզերում հիմնադրվել է 15 Օրհուս կենտրոն: Այդ կենտրոնների գործունեությունը ներառում է շրջակա միջավայրի խնդիրների մասին տեղեկատվության տարածումը, շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակության մասնակցությանը եւ շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ արդարադատության մատչելիության խթանումը:

Թեպետ Կենտրոնները լիարժեք հազեցած են եւ շրջակա միջավայրի ոլորտում աշխատանքի մեծ փորձ ունեն, նրանց դեմ ծառացած հիմնական եւ կարեւորագույն խնդիրներից է իրավական կարգավիճակի եւ ֆինանսական կայունության բացակայությունը: Ներկայումս Օրհուս կենտրոնները աջակցություն են ստանում ԵԱՀԿ երեւանյան գրասենյակից, որը հոգում է աշխատակիցների աշխատավարձը եւ գործունեության ծախսերը, ինչպես նաեւ մարզպետարաններից և քաղաքապետարաններից, որոնք կենտրոններին տարածք են տրամադրում եւ վճարում կոմունալ վարձերը: Իրավական կարգավիճակի բացակայության պատճառով կենտրոնները ի վիճակի չեն ստեղծել իրենց սեփական միջոցները եւ/կամ դիմել դրամաշնորհներ ստանալու համար, քանի որ ՀՀ օրենսդրության համաձայն, իրավաբանական անձ չհանդիսացող կառույցները որեւէ ֆինանսական գործունեություն ծավալելու իրավունք չունեն: Վերոհիշյալը ոչ միայն խոչընդոտում է կենտրոնների ամենօրյա աշխատանքները, այլեւ խանգարում է որպես անկախ կազմակերպություն նրանց զարգացմանը:

Միեւնույն ժամանակ ֆինանսական միջոցների աղբյուրների բազմազանության բացակայության պայմաններում Կենտրոնները խոցելի են դառնում թե կայուն զարգացման եւ թե անկախության տեսակետներից: Այն դեպքում, եթե ԵԱՀԿ-ն դադարեցնի իր աջակցությունը, կարող է այնպիսի իրավիճակ ստեղծվել, որ Կենտրոնների որոշ մասը ի վիճակի չլինի շարունակել գործունեությունը եւ ստիպված կլինի փակվել, իսկ մյուս Կենտրոնները հավանաբար ամբողջովին կախվածության մեջ կհայտնվեն պետության կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, որն ազդեցություն կթողնի նրանց ինքնուրույնության վրա:

Նման իրավիճակից խուսափելու եւ Կենտրոնների հետագա գոյությունը եւ զարգացումը պահպանելու համար Հայաստանում Կենտրոնների գնահատման եւ

նրանց կայուն զարգացման ծրագրի մշակման նախագիծ իրականացվեց՝ հստակեցնելու կենտրոնների հետագա գործունեության տարբեր հնարավորությունները, բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավելով Կենտրոնների կարգավիճակի վերաբերյալ որոշուման կայացման գործընթացում:

Նախագծի նպատակները

Նախագծի ընդհանուր նպատակն է օգնել տեղական Օրհուս կենտրոններին (այսուհետ՝ Կենտրոններ) հզորացնել կազմակերպչական զարգացման հնարավորությունները, մասնավորապես կայուն զարգացման երկարաժամկետ ծրագրի մշակման եւ իրականացման միջոցով՝ ներառելով իրավաբանական գրանցումը, կազմակերպչական կառուցվածքների եւ դրամահավաք մեխանիզմների հիմնադրումը:

Գնահատման նախագծի առանձնահատուկ նպատակներն են՝

- ուսումնասիրել Օրհուս Կենտրոնների դերը եւ նրանց գործունեության ազդեցությունը տեղական մակարդակով շրջակա միջավայրի զարգացման վրա,
- Կենտրոնների անձնակազմի, ԵԱՀԿ ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ մյուս շահագրգիռ կողմերի մասնակցությամբ բացահայտել կենտրոնների կազմակերպչական զարգացման (ԿԶ) մակարդակը եւ կարիքները,
- առաջարկություններ ներկայացնել Կենտրոնների իրավական կարգավիճակի եւ հետագա զարգացման մեխանիզմների վերաբերյալ,
- երկարատեւ կայուն զարգացումն ապահովելու համար աջակցել զարգացման համապատասխան գործողությունների պլանավորմանը:

Նախագիծն իրականացվել է Քաղաքացիական զարգացման եւ համագործակցության հիմնադրամի (ՔԶՀՀ) անձնակազմի կողմից՝ կազմակերպության հետազոտողների, կազմակերպչական զարգացման (ԿԶ) մասնագետի եւ իրավաբանի մասնակցությամբ:

Իրականացված գործունեությունը

Նախապատրաստական փուլի ընթացքում Քաղաքացիական զարգացման եւ համագործակցության հիմնադրամը (ՔԶՀՀ) ԵԱՀԿ ներկայացուցիչների հետ բազմաթիվ հանդիպումներ ունեցավ նախագծի նպատակները եւ խնդիրները ճշգրտելու, ինչպես նաեւ նախագծի մեթոդաբանությունը քննարկելու համար:

Արդյունքում ՔԶՀՀ-ն Օրհուս կենտրոնների եւ շահագրգիռ կողմերի համախմբությունից հարցազրույցների համար ընտրանք կազմեց, մշակեց հարցազրույցների հարցաթերթիկը եւ կազմեց հարցազրույցներն անցկացնելու ժամանակացույցը:

Հիմնական փուլի ընթացքում անցկացվեցին հարցազրույցները, կատարվեց

առաջնային իրավական վերլուծություն, փաստաթղթերի ուսումնասիրություն, կազմակերպվեց մտազրոհ:

Հետազոտողները այցելեցին գործող 14 Կենտրոններից չորսը, հարցազրույցներ անցկացրեցին համակարգողների եւ տեղական շահագրգիռ կողմերի (մարզպետարանների, քաղաքապետարանների եւ տեղական ՀԿ-ների) ներկայացուցիչների հետ հետեւյալ Կենտրոններում՝

- Հրազդանի Օրհուս կենտրոն,
- Գյումրիի Օրհուս կենտրոն,
- Կապանի Օրհուս կենտրոն,
- Երեւանի Օրհուս կենտրոն:

Եւս երկու կենտրոնների՝ Գավառի եւ Ալավերդիի համակարգողների հետ հարցազրույցներ կազմակերպվեցին Ծաղկաձորում՝ Օրհուս կենտրոնների արտագնա գործնական հանդիպման ժամանակ:

Բացի այդ, հարցազրույցներ անցկացվեցին հետեւյալ ազգային ՀԿ-ների, պետական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝

- Տարածքային կառավարման նախարարություն (Տեղական ինքնակառավարման մարմնի վարչության պետ)
- Բնապահպանության նախարարություն (Փոխնարարար եւ բնապահպանության վարչության պետ)
- «Խազեր» ՀԿ (Նախագահ)
- «Էկոլուր» ՀԿ (Նախագահ)
- Բնության համաշխարհային հիմնադրամ (ԲՀՀ, WWF Հայաստան, Տնօրեն)
- ՄԱԶԾ-ի ՇՄՀՀ (UNDP GEF) Փոքր դրամաշնորհների ծրագիր (Ազգային համակարգող)
- Թրասփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (Նախագահ)

2010թ. դեկտեմբերի 16-ին Ծաղկաձորում կազմակերպված՝ Օրհուս կենտրոնների արտագնա գործնական հանդիպման ժամանակ մտազրոհ կազմակերպվեց կայուն զարգացման մոդելների վերաբերյալ:

Այսպիսով, ընդհանուր առմամբ իրականացվեց 4 այցելություն, 24 հարցազրույց եւ մեկ խմբային քննարկում:

Հարցազրույցների անցկացմանը զուգահեռ ՔԶՀՀ հետազոտողների կողմից ուսումնասիրվեցին Կենտրոնների փաստաթղթերը (Փոխըմբռնման հուշագրեր, պլաններ, հաշվետվություններ, ուղեցույցներ) եւ ՔԶՀՀ խորհրդատուների կողմից իրավական վերլուծություն իրականացվեց իրավաբանական գրանցման հնարավոր տարբերակները ուսումնասիրելու համար:

Ընդհանուր նկատառումներ

Կենտրոնների դերը Հայաստանում

Բոլոր հարցվողները նշում են, որ Հայաստանում Օրհուս կենտրոնները շրջակա միջավայրի կյանքում շատ կարևոր դեր են խաղում: Հարցվողները նույնիսկ նշել են, որ Կենտրոնները կարևոր դերակատարներ են հանդիսանում տեղական ժողովրդավարության հիմնադրման գործում. *«Դրանք որոշ տեղերում միակ դեմոկրատական կողմերն են մեր երկրում»* (Ինգա Զարաֆյան, Էկոլուր ՀԿ): Տարածքային կառավարման ներկայացուցիչը կենտրոններն անվանեց շրջակա միջավայրի հետ կապված եւ տարաշրջանի համար կարևոր հարցեր բարձրացնող այլընտրանքային աղբյուր:

Կենտրոնների՝ առավել բարձր գնահատվող և հաճախ հիշատակվող դերերից են տեղեկատվության ապահովումը, տեղեկացվածության բարձրացումը, մարդկանց ձայները լսելի դարձնելը եւ տեղական ՀԿ-ները եւ համայնքները փոփոխությունների համար մոբիլիզացնելը: Տեղական ինքնակառավարման եւ տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչները հատկապես գնահատում են Կենտրոնների դերը իրենց և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների հետ կամուրջ հանդիսանալու հարցում, ինչպես նաեւ որպես պետություն – քաղաքացիական հասարակություն երկխոսությանը ֆասիլիտատոր:

«Կենտրոնը մարզպետարանին հնարավորություն տվեց համախմբել պետական կառույցները եւ հասարակայնությունը: Օրհուս կենտրոնը կարելի է ասել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները միացրեց միմյանց հետ և քաղաքացիական հասարակության հետ » (Ս.Ավետիսյան, Սյունիքի մարզպետարան):

Տեղական հասարակական եւ միջազգային կազմակերպությունները շեշտում են Կենտրոնների դերը որպես քննարկումների եւ հանդիպումների անցկացման պլատֆորմ՝ կրկին բարձր գնահատելով նրանց միջնորդ լինելու դերը որոշում կայացնող մարմինների եւ տեղական համայնքների միջեւ. *«Մենք շատ ուրախ ենք Հայաստանում այսպիսի կենտրոններ ունենալու համար, եթե այսօր մենք համազործակցում ենք Շիրակի ու Սյունիքի մարզերի հետ, ապա վաղը, եթեմ աշխատենք այլ մարզում, միանշանակ կօգտվենք այնտեղի կենտրոնների հնարավորություններից: Դա շատ լավ պլատֆորմ է, որտեղ մարդիկ կարող են միանալ և ինֆորմացիա ստանան կամ փոխանակեն, կամ քննարկումներ ունենան տարբեր թեմաներով:»* (Կ. Մանվելյան, Բնության համաշխարհային հիմնադրամ, ԲՀՀ, WWF):

Հատկապես բարձր է գնահատվում Կենտրոնների մարզերում գտնվելու գործոնը.

«Մարդկանց հետ մշտական աշխատանք է անհրաժեշտ տեղերում, մենք չենք կարող մշտապես ներկա լինել այնտեղ» (Ա. Համբարձումյան, Խազեր ՀԿ), «Նրանք տեղացիներ են, խոսում են տեղական բարբառով, երբեմն հենց բարբառով խոսելն է կարևոր մարդկանց համոզելու համար» (Բ. Զառաֆյան, Էկոլուր ՀԿ):

Կենտրոնների համակարգողները նույնպես նշում են տեղերում առկա դրական փոփոխությունները, որոնք հիմնականում վերաբերում են հասարակության եւ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ներկայացուցիչների կողմից ընկալման փոփոխություններիին. *«ամենակարևորը այն է, որ մենք պետության եւ ՏԻՄ-ի բնապահպանական մասերը ստիպում ենք աշխատել» (Գյումրիի կենտրոնի համակարգող), «մինչեւ կենտրոնը ստեղծելը, «մարդու իրավունք» բառը որն էր, էկոլոգիական իրավունք, շրջակա միջավայր եւ այլն երբ վերհիշում եմ այն ժամանակները, շատ բան է փոխվել: ԵԱՀԿ-ն մեր մեջ տեսնում է քաղաքացիական հասարակության միավորման ծիլերը»:* (Կապանի կենտրոնի համակարգող):

Օրհուս կենտրոնի առաքելությունը

Ընդհանուր առմամբ, կենտրոնների առաքելության գաղափարը՝ այն տեսքով, որ ձեւակերպված է պաշտոնական փաստաթղթերում, կիսում են բոլոր կենտրոնների համակարգողները, ինչպես նաեւ պետական եւ հասարակական ոլորտի ներկայացուցիչների մեծ մասը: ԵԱՀԿ, ՀՀ Բնապահպանության նախարարության եւ բոլոր այն մարզերի մարզպետարանների միջև, որտեղ տեղակայված են Կենտրոնները, ստորագրված փոխըմբռնման հուշագրի համաձայն, Կենտրոնների գործունեության նպատակն է *«աջակցել հասարակությանը շրջակա միջավայրի մասին տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության բարձրացմանը»* (մարզերում էկոլոգիական տեղեկատվության հասարակական կենտրոններ ստեղծելու մասին Փոխըմբռնման հուշագիր, ՓՀ): Կենտրոնների հիմնական գործառույթներն են համարվում Օրհուս կոնվենցիայի երեք պունտերի իրականացումը՝ շրջակա միջավայրի տեղեկատվության հասանելիությունը, հասարակության մասնակցության իրավունքը եւ արդարադատության մատչելիությունը շրջակա միջավայրի հետ կապված հարցերում:

Հարցազրույցներին մասնակցող բոլոր կենտրոնների համակարգողները ընդունում եւ կիսում են Կենտրոնների հիմնական գործառույթները, սակայն եւ համակարգողները, եւ մյուս հարցվողները տարբեր շեշտադրություն են դնում թվարկված բաղադրիչներից յուրաքանչյուրի վրա:

Հաճախ տեղեկատվության հասանելիությունը դիտվում է որպես Կենտրոնների առաջնային գործառույթ. *«տեղեկացվական մակարդակի բարձրացումը, իմ կարծիքով, ամենակարևոր եւ առաջնայինն է, նոր մնացածը՝ դրանից բխող»* (Ալավերդիի Կենտրոնի համակարգող): Միեւնույն ժամանակ այլ շահագրգիռ կողմերի՝ Կենտրոնի

գործունեության նկարագրությունը եւ Կենտրոնի աշխատանքների հաշվետվության մասին ներկայացված վիճակագրությունը վկայում են, որ փաստորեն առավել ծավալուն աշխատանքը իրականացվում է իրազեկության բարձրացման գործում: Մրաբնական բացատրությունն է տեղեկատվության պակասը եւ բնակչության շրջանում «Էկոլոգիական գիտակցության» ցածր մակարդակը, որի արդյունքում տեղեկատվական գործունեության ավելի մեծ պահանջ է զգացվում. «Նախ եւ առաջ, մենք պետք է հասնենք այն մակարդակի, երբ յուրաքանչյուր քաղաքացի տեղեկացված լինի այն մասին, թե ինչպես իրեն պաշտպանի, հասկանա՝ որ ոլորտներում եւ ինչպես նրա իրավունքները կարող են պաշտպանվել... Դրանից հետո նա կգնա նույն հասարակական մասնակցությանը եւ արդարադատության մատչելիությանը, արդեն ինքնուրույն եւ գիտակցված ձևով կգնա» (Գավառի կենտրոնի համակարգող):

Բնապահպանության նախարարության տեսլականը Օրհուս կենտրոնների առաքելության վերաբերյալ ավելի շատ կապակցվում է քաղաքականության իրականացման հետ. «Նրանք պետք է Բնապահպանության նախարարության դեսպանները լինեն, տեղերում ն համապատասխան կերպով իրազեկեն բնապահպանական խնդիրների մասին եւ տեղերում իրականացնեն մեր քաղաքականությունը» (Ս. Պապյան, ԲՆ Փոխնախարար):

Իբրեւ լրացուցիչ գործառույթ, թե ոչ առեւտրային եւ թե պետական ոլորտի ներկայացուցիչների կողմից հնչեցվում է վերը նշված՝ միջնորդի դերը. «մարզերում նրանք կարող են իրականացնել համակարգող գործառույթը... Ինչպես էկոլոգիական դաշինքը Երեւանում... Իբրեւ ռեսուրս կենտրոն, նրանք կարող են միավորել [ՀԿ-ները]» (Ս. Այվազյան, Transparency International): «Երկխոսություն մթնոլորտը ամենակարեւորն է, մենք պետք է կարողանանք երկխոսություն կազմակերպել պետական մարմինների եւ հասարակության միջեւ, որպեսզի դրա միջոցով լուծվեն շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները» (Երեւանի կենտրոնի համակարգող), «առաքելությունը հենց այդ կապի ապահովումն է, շրջակա միջավայրի հետ կապված հասարակությանը հուզող հարցերը ներկայացնի պետությանը եւ հասարակության կողմից պահանջի դրանց լուծումը» (Հ. Գասպարյան, Շիրակի մարզպետարան):

Չնայած նրան, որ բոլոր շահագրգիռ կողմերը ընդհանուր առմամբ նույն կերպ են ընկալում գործառույթները, որոշակի տարաձայնություն կա՝ կապված Կենտրոնների կողմից Օրհուս կոնվենցիայի երրորդ հիմնական սկզբունքի իրականացման հետ: «ոչինչ գրված չէ դատարանի մասին¹: Այնտեղ ասվում է «արդարադատության մատչելիություն», որը վերաբերում է հասարակությանը եւ ոչ թե Կենտրոնին: Այն է՝ Օրհուս կենտրոնների դերը կայանում է հասարակության տեղեկացվածության եւ արդարադատության մատչելիության երաշխավորման մեջ, այնպես որ երբ շրջակա միջավայրի պահպանման իրավունքները ոտնահարվում են, հասարակությունը

¹ Այստեղ հարցվողը հղում է անում ԵԱՀԿ-ի կողմից աշակցություն ստացող Օրհուս կենտրոնների գլխավոր ուղեցուցի փաստաթղթին:

տեղյակ է իրավունքների պաշտպանության մեխանիզմների եւ հնարավորությունների մասին, իսկ արդարադատության մարմինը պատրաստ է բողոքն ընդունելու»: (Հրագրանի կենտրոնի համակարգող): Միեւնույն ժամանակ, բազմաթիվ համակարգողներ նշում են, որ իրենց կենտրոնները «թույլ» են արդարադատության մատչելիությունը ապահովելու առումով՝ բացատրելով այն իրավական կարգավիճակի բացակայությամբ. «*մենք չենք կարող այս երրորդ մասով ինչ-որ բան անել, քանի որ մենք չենք դիմում եւ չենք կարող դիմել դատարան*» (Գապանի կենտրոնի համակարգող): Գավառի Կենտրոնի համակարգողը դատարանին ուղղակի դիմելու անհրաժեշտությունը բացատրեց տեղական ՀԿ-ների կողմից նախաձեռնության բացակայությամբ. «*երբ մենք խնդիր ենք մատնանշում, մենք պետք է իրավունք ունենանք [դիմելու], քանի որ մնացած բոլորը վախենում են: [...] Նրանք չեն ցանկանում ռիսկի դիմել*»: (Գավառի Կենտրոնի համակարգող):

Այնուհանդերձ, պետության որոշ ներկայացուցիչներ արտահայտում են իրենց մտահոգությունն այն մասին, թե արդյոք դատարան դիմելը Կենտրոնների իրավասության սահմաններում է (որոշ օրինակներ կներկայացվեն հաշվետվության հետագա տեքստում): Ամփոփելով՝ պետք է նշել, որ անհրաժեշտ է հստակեցնել «արդարադատության մատչելիության» գործառույթի իրականացման մեխանիզմները եւ հստակ արտահայտել դա Կենտրոնի հետ կապված փաստաթղթերում եւ կանոնակարգերում, որպեսզի այս հարցում բացառվի որեւէ թյուրիմացություն:

Կենտրոնների ընդհանուր ընկալումը

Կենտրոնները հիմնականում լավ ճանաչում ունեն տեղի բնակչության մոտ, մանավանդ այն մարզերում, որտեղ շահերի պաշտպանության և լրատվական լայն քարոզարշավներ են իրականացվել. «*Նույնիսկ գիտեք ոնց, մարզպետարանն էլ թեժ գիծ ունի/.. / Բայց հաճախ էնտեղ են գանգում, Գևորգին են գանգում, իմանալով որ ինքը պաշտպան է:*» (Հ. Գասպարյան, Շիրակի Մարզպետարան): Այնուհանդերձ, ճանաչումը հաճախ բավական չէ բնակչության հետ աշխատելիս, քանի որ մարդիկ սոցիալական խնդիրներով ավելի են մտահոգված, քան շրջակա միջավայրի հետ կապված հարցերով. «*մեր մարզում առաջնայինը սոցիալական խնդիրներն են, մարդիկ ասում են՝ իմ երեխան սոված է, եւ ինձ չի հետաքրքրում, Սեւանի ամիը աղտոտված է, թե ոչ*» (Գավառի կենտրոնի համակարգող): Բազմաթիվ հարցվողներ նշում են, որ հիմնական խնդիրներից մեկը բնակչության շրջանում բնապահպանական գիտակցության մակարդակի բարձրացումն է:

Մյուս եզրահանգումը կապված կենտրոնների հանրային իմիջի հետ, վերը նշված՝ Օրհուս կենտրոնների կապակցումն է ԵԱՀԿ-ի հետ: ԵԱՀԿ-ի հաճախակի այցելությունները, ԵԱՀԿ-ի պատկերանիշի եւ անվան ծավալուն օգտագործումը, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների եւ դեսպանությունների

այցելությունները ավելի մեծ կշիռ են հաղորդում Կենտրոններին, ինչպես նաև Կենտրոնների հեղինակությունը ասոցիացնում են միջազգային կառույցների հետ. *«նրանք չեն գիտակցում, որ սա հասարակական կառույց է, որ մենք նույնիսկ իրավական կարգավիճակ չունենք, նրանք մտածում են մեր մասին իբրև ԵԱՀԿ-ի հետ կապ ունեցող ինչ-որ կառույց»* (Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Կառավարման ասպեկտները

Ներկայումս Հայաստանի Օրհուս կենտրոնները գործում են Փոխըմբռնման հուշագրի (ՓՀ) համաձայն, որը ստորագրվել է մի կողմից՝ կառավարության՝ ի դեմս Բնապահպանության նախարարության (ԲՆ) և Տարածքային կառավարման նախարարության (ՏԿՆ) եւ մյուս կողմից՝ ԵԱՀԿ-ի միջև: Որպես կանոն, Կենտրոնները մասամբ ֆինանսավորվում են ԵԱՀԿ-ի կողմից, որը հոգում է աշխատավարձերի ծախսերը, Ինտերնետ կապը, տրանսպորտային ծախսերը եւ, մասամբ՝ տարածքային եւ/կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք տարածք են տրամադրում եւ վճարում կոմունալ ծախսերը: Ֆինանսական կառավարումը իրականացվում է ՀԿ-ի կողմից, որը հավաքում է Կենտրոնների ֆինանսական հաշվետվությունները եւ հաշվետվություն ներկայացնում ԵԱՀԿ-ին ու հարկային մարմիններին, Ինտերնետային կայքը կառավարում է ԲՆ-ն եւ ֆինանսավորում է ԵԱՀԿ-ն: Կենտրոնների որոշումներ կայացնող հիմնական մարմինը Փորձագետների խորհուրդն է, որը բաղկացած է հասարակության եւ պետական մարմինների ներկայացուցիչներից:

Բացի ՓՀ-ից, Կենտրոնների գործունեության փաստաթղթային հիմք են հանդիսանում Օրհուս կենտրոնների Ուղեցույցը (դա 2009թ. ստեղծված օրինակելի փաստաթուղթ է, որը ցուցումներ է տրամադրում ԵԱՀԿ-ի կողմից աջակցություն ստացող Օրհուս կենտրոնների ռազմավարական կողմնորոշման, հիմնադրման եւ գործունեության իրականացման համար), 2008թ. Ռիզայում ընդունված Օրհուս կենտրոնների ճանապարհային քարտեզը (roadmap) եւ տվյալ մարզի մարզային զարգացման ծրագիրը:

Մասնակցող կառույցների եւ կանոնակարգող փաստաթղթերի այս բազմազանությունը, ֆինանսավորող, կառավարող, որոշումներ կայացնող տարբեր մարմինները անորոշություն են հաղորդում Կենտրոնների կարգավիճակին՝ արդյոք դրանք հանդիսանում են պետական մարմիններ, հասարակական թե միջազգային կառույցներ եւ ի վերջո, ո՞րն է վերահսկում իրականացնող մարմինը:

Մյուս կողմից այս բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը երաշխավորում է թե անկողմնակալությունը (ոչ առեւտրային կազմակերպությունների եւ ԵԱՀԿ-ի մասնակցության շնորհիվ) եւ թե պետական կառույցի կողմից

պարտավորության ստանձնումը (ԲՆ-ի եւ տեղական/տարածքային ինքնակառավարման մարմնի մասնակցության շնորհիվ): Հետագայում, երբ կնկարագրենք Կենտրոնների ապագա ցանկալի կարգավիճակը, պարզ կդառնա, որ հարցվողները հիմնականում գտնում են, որ անհրաժեշտ է պահպանել շահագրգիռ կողմերի բազմազանությունը՝ Կենտրոնների արդյունավետ գործունեությունը պահպանելու համար: Այս բաժնում մենք կուսումնասիրենք կենտրոնների ներկայիս վարչարարական եւ որոշումների կայացման մեխանիզմները:

Փորձագետների խորհուրդը

Յուրաքանչյուր Կենտրոնում ՓՀ-ի դրույթների համաձայն ստեղծվել է փորձագետների խորհուրդ: Խորհուրդի կազմը կիսով չափ բաղկացած է պետական կառույցների ներկայացուցիչներից (հիմնականում մարզպետարաններ եւ քաղաքապետարաններ, նախարարության գործակալություններ եւ պետական ոչ առեստրային կազմակերպություններ) եւ կիսով՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից (տեղական ՀԿ-ներ եւ լրատվական ընկերություններ): Սովորաբար Խորհուրդի կազմը բաղկացած է 10 անդամներից, սակայն այդ թիվը կարող է տարբեր լինել տարբեր շրջաններում (օրինակ, Գավառում Խորհրդի անդամները 20-ն են):

Խորհրդի հիմնական գործառույթներն են Կենտրոնների տարեկան պլանի մշակումը եւ հաստատումը, տարեկան հաշվետվությունների կազմումը, Կենտրոնի գործունեության աջակցությունը եւ ընդհանուր գործառնական կառավարումը: ՓՀ-ի դրույթների համաձայն, Խորհրդի նիստերը պետք է կազմակերպվեն ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Միեւնույն ժամանակ, Խորհրդի գործունեությունը տարբեր է տարբեր վայրերում: Օրինակ, Գյումրիում գտնվող Կենտրոնի Խորհուրդը օրինակելի է իր արդյունավետ գործունեությամբ. *«Փորձագետների խորհուրդը Կենտրոնի գործունեության հիմնական հզորությունն է: [...] Դա այն կառույցն է, որը պատիվ է բերում Կենտրոնին, ինչպես նաեւ բազմաթիվ մարմինների հետ համագործակցության հնարավորություն է ընձեռում»* (Գյումրիի Կենտրոնի համակարգող): Գյումրիում գտնվող Կենտրոնը նաեւ հաջողությունների է հասել Խորհրդի գործունեության հետ կապված ընթացակարգերի իրականացման մեջ. *«պարտադիր բոլոր նիստերը կայանում են, պարտադիր բոլոր նիստերն ունեն օրակարգ, պարտադիր էլ օրակարգը նախապես է ուղարկվում, ամեն ինչը շատ հասուն պրոֆեսիոնալ ձեռագիր է, որ կարելի է վերցնել, և պարտադիր դրանք սղագրվում են, պարտադիր էլ արձանագրություններն ուղարկվում են մասակիցներին, փորձագիտական խորհրդի անդամներին»* (Ս. Մարտիրոսյան, Սախարովի մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակ, Գյումրի):

Որոշ համակարգողներ, գնահատելով Խորհուրդների առկայության կարեւորությունը,

այնուամենայնիվ, նշում են, որ հաճած դժվար է լինում ամեն ամիս Խորհրդի նիստեր կազմակերպել եւ պահպանել Խորհրդի բոլոր անդամների ակտիվությունը: Դրա պատճառներից մեկը, որը հնչեցվեց Գավառի Կենտրոնի համակարգողի կողմից, տարածությունն է, որը բարդացնում է փորձագետների՝ ամեն ամիս Գավառ գալը: Կան նաեւ այնպիսի դեպքեր, երբ Խորհուրդները բոլորովին չեն գործում. *«որովհետեւ մեր հասարակությունը այնքան լիբերալ չի, որ պետական կառավարման մարմինը նստի հասարակականի հետ հավասար խոսա, հասարակականները միշտ ճնշվում և արանքում, ու որոշումները շեղվում էին»* (Հրագրանի Կենտրոնի համակարգող):

Արդյունքում տվյալ Կենտրոնում Խորհրդի նիստեր որպես այդպիսին չեն կազմակերպվում, եւ որոշումները այստեղ հիմնականում կայացվում են Խորհրդի նախագահի եւ մարզպետի տեղակալի հետ խորհրդակցության հիման վրա: Երեւանում Խորհուրդը նույնպես չի գործում, սակայն վերջերս Խորհրդի կազմում կատարվել են որոշակի փոփոխություններ դրա աշխատանքները ակտիվացնելու նպատակով. *«Երկար տարիներ էր ՓԽ-ն կար ու եկավ ժամանակ, որ այլևս իրենց կարիքը չէր զգացվում, չնայած որպես փորձագետներ իրենք միշտ մասնակցել են, միշտ դիմել ենք, իրենք օգնել են, բայց որ հավաքվեին, նիստեր անեին, չնայած շատ հարցերում մեծ աշխատանք և կատարել [...]», մի խոսքով էս տարի նորից վերականգնել ենք Խորհուրդը, 2 տարի չէր գործում,»* (Երեւանի Կենտրոնի համակարգող):

Ծաղկաձորում արտագնա գործնական հանդիպման քննարկումների ժամանակ, համակարգողների մեծ մասը համաձայնվեց Փորձագետների Խորհուրդների պահպանման կարևորության շուրջ. այսպիսով, խնդիրը հավանաբար մեխանիզմների եւ ընթացակարգերի վերանայման մեջ է, որպեսզի այդ Խորհուրդները չլինեն զուտ ֆորմալ մարմին, այլ արդյունավետ դեր խաղան Կենտրոնների գործունեության մեջ:

Համակարգողի գործոնը

Ակնհայտ է, որ համակարգողի անձնավորության գործոնը էական է Կենտրոնների գործունեության, արդյունավետության եւ իմիջի առումով: Հաճախ նշվում են համակարգողների անձնավորությունների այնպիսի հատկություններ, ինչպիսին են պատրաստակամությունը, նվիրվածությունը եւ իրազեկությունը: *«Անկասկած, համակարգողի անձը կարևոր է, էթե համակարգողը ակտիվ է, տիրապետում է տեղեկատվությանը, նա կարող է հաջող արշավ նախաձեռնել»* (Ի. Զառաֆյան, Էկոլուր ՇԿ): Հաճախ նույնիսկ Կենտրոնի գործունեության ուղղվածությունը որոշ չափով կախված է լինում համակարգողի ունակություններից եւ մոտեցումներից: Կան Կենտրոններ, որոնք ավելի շատ ներգրավված են շահերի պաշտպանության գործունեության մեջ, մինչդեռ մյուսները ավելի շատ կենտրոնանում են տեղեկացվածության բարձրացման եւ Էկոլոգիական կրթության վրա: Իհարկե, մարզային առանձնահատկությունները այդ դեպքում նույնպես կարևոր են,

այնուհանդերձ հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ համակարգողի անհատականությունը որոշիչ նշանակություն ունի: Գյումրիի Կենտրոնի ղեկավարը, երբ այն բացահայտ բախման մեջ մտավ մարգալետարանի գործողությունների դեմ, այս դրավառ օրինակն է. « *Ամբողջ քաղաքն էլ Օրհուս կենտրոնին ճանաչում է, կենտրոնը բոլորի հետ քյալլա է տալիս, էլի ի օգուտ ժողովրդի: Գիտեն, որ ինքը [Գեւորգը] եթե մտքին մի բան դրեց, ուրեմն շուխուրը կբարձրացնի, իրա նպատակին կհասնի»* (Ա. Խաչատրյան, Գյումրիի քաղաքապետարան):

Մեկ այլ մեջբերում միջազգային կազմակերպության ներկայացուցչի խոսքից. «*Օրհուս կենտրոնների համակարգողները շատ տարբեր են, մեկը հիպեր ակտիվ է, մեկը միջին չափով, մեկը քիչ»* (Հ.Ղազարյան, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի համաշխարհային հիմնադրամ, ՇՄՀՀ, UN GEF ծրագիր): Միեւնույն ժամանակ դժվար է պահպանել արդյունավետ գործող Կենտրոն, եթե համակարգողը ակտիվ չէ. «*այնտեղ ոչ ակտիվ մարդուն շատ դժվար է, եթե մարդը ակտիվ չի, ուշ թե շուտ նա դուրս է գալիս, որովհետև քանի որ Օրհուսին անընդհատ քաջքշում են բոլոր կողմերից, ինքը չի դիմանում,*» (Ի.Զարաֆյան, Էկոլուր ՀԿ), «*մի մարդ գործ ունի հսկա մի համակարգի հետ, եւ այդ համակարգը չի ուզում փոխվել [...] Նրանք բոլորն էլ գիտակից, նվիրված մարդիկ են»* (Գ. Ղազինյան, ԵԱՀԿ): Հավատարմությունը սկզբունքներին եւ նվիրվածությունը գաղափարներին շատ կարեւոր են արդյունավետ գործունեության համար:

Կազմակերպչական զարգացման ասպեկտները

Պլանավորումը եւ որոշումների ընդունումը

Կենտրոնները մշակում են տարեկան պլաններ, որոնք հաստատվում են Փորձագետների խորհրդի կողմից: Որպես կանոն, այդ պլանները հիմնված են լինում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում ներառված առաջնային խնդիրների, ինչպես նաև Կենտրոնների կողմից կատարած ոլորտային հետազոտությունների արդյունքների վրա: Բոլոր Կենտրոնները իրենց պլաններում ներառում են միջազգային էկոլոգիական օրերի տոնումը եւ էկոլոգիայի թեմայով սեմինարների անցկացումը: Այնուհանդերձ, համակարգողների մեծ մասը նշում է, որ հաճախ դժվար է լինում լիարժեք իրականացնել տարեկան պլանները, քանի որ տարվա ընթացքում անսպասելի խնդիրներ կարող են առաջանալ, եւ պլանավորված գործողությունները հաճախ փոխարինվում են ավելի հրատապ խնդիրների լուծմամբ. *«մենք ունենում ենք տարեկան պլան, բայց հետևել է դ պլանին չի ստացվում, որովհետև մեր մարտահրավերները շուտ-շուտ փոխվում են, անկանխատեսելի են»* (Հրազդանի Կենտրոնի համակարգող):

Համակարգողները գիտակցում են ավելի երկարաժամկետ պլան ունենալու անհրաժեշտությունը. *«Ցավոք, պլանավորումը ամենացավոտ հարցերից է: Յուրաքանչյուր կազմակերպություն պետք է ունենա նպատակակետ, որն իրականացվելու է հինգ տարվա ընթացքում: Եթե մենք չունենք տեսլական, չունենք դրանից բխող ռազմավարություն, մենք չենք կարող պլանավորել մեր այս տարվա անելիքները: Ստացվում է, որ պլանավորեցինք մի բան, բայց արեցինք, ինչ կարող էինք»* (Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Որոշ համակարգողներ օգտագործում են Օրհուսի ճանապարհային քարտեզը որպես Կենտրոնների երկարաժամկետ պլանավորման ուղեցույց եւ հաշվի են առնում այն տարեկան պլաններ մշակելու ժամանակ: Միեւնույն ժամանակ, Օրհուս Կենտրոնների ռազմավարական պլանավարման համար անհրաժեշտ է պետական մակարդակի պլանավորում. *«Հայաստանը պետք է հաստատեր գործողությունների պլանը, ինչպես սովորաբար արվում է մյուս կոնվենցիաների դեպքում, սակայն մենք չենք կատարել դա Օրհուս կոնվենցիայի դեպքում»* (Ս. Այվազյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ): *«Եթե լիներ Օրհուս կոնվենցիայի դրույթների իրականացման ազգային ծրագիրը, այն կդառնար Օրհուս կենտրոնների ձեռքի գիրքը»* (Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Մարդկային և նյութական ռեսուրսներ ու կարիքներ

Կենտրոնները իրականացնում են լայնածավալ գործունեություն՝ սահմանափակ ռեսուրսներ օգտագործելով: Նրանք հազեցած են անհրաժեշտ կահույքով, տեխնիկական սարքերով եւ ապահովված են Ինտերնետ կապով: Կենտրոնների միջև որոշակի

տարբերություններ կան սարքերով հագեցվածության առումով, օրինակ որոշ կենտրոններ ունեն պրոյեկտորներ եւ շարժական համակարգիչներ, մինչդեռ մյուս կենտրոնները չունեն այդ սարքերը:

Այցելած կենտրոններից Կապանի կենտրոնը առավել պակաս էր հագեցած՝ այնտեղ չկար ոչ միայն պրոյեկտոր ու նոութբուք, այլեւ ֆոտոխցիկ եւ ֆիքսված հեռախոսակապ (Կենտրոնի համակարգողը ստիպված էր հեռախոսազանգեր կատարել՝ օգտագործելով իր անձնական բջջային հեռախոսը): Իդեալական հնարավորություններ ունենալու համար Կենտրոնների համակարգողները ցանկություն արտահայտեցին ունենալ նաեւ շրջակա միջավայրի մոնիտորինգի որոշ սարքեր:

Կապանի կենտրոնի հետ համագործակցող կազմակերպությունները իրենց մտահոգությունը հայտնեցին Կենտրոնի տրանսպորտային միջոցների բացակայության, ինչպես նաեւ մարզի մակարդակով ուղեւորություններ կատարելու ոչ բավարար ֆինանսական միջոցների վերաբերյալ. *«տեղա է վառելիքի խնդիր. նրանք կարիք ունեն գյուղեր գնան, ուսումնասիրեն, հարցեր բարձրացնեն թեկուզ գյուղերում, եւ չգիտեն, գուցե անում են, իրենց ուժերով, բայց լավ կլիներ որ ռեսուրսներ ունենան»* (Կ. Մանվելյան, ԲՀՀ):

Յուրաքանչյուր կենտրոնում մեկ կամ երկու մարդ են ներգրավված որպես Կենտրոնի համակարգողներ, եւ գրեթե բոլոր կենտրոնները օգտագործում են նաեւ կամավորական աշխատանքը: Հարցազրույցներին մասնակցած կենտրոններում գործում են մինչեւ 12 կամավոր, եւ նույնիսկ անհրաժեշտություն չի լինում գովազդել կամավորական աշխատանքի հնարավորությունը. *«Մենք ոչ մեկին չենք կանչել»* (Ալավերդիի Կենտրոնի համակարգող), *«Նրանք գալիս եւ ասում են. «մեզ հաստաքորքում են էկոլոգիայի խնդիրները, եւ մենք ուզում ենք աշխատել»* (Կապանի Կենտրոնի համակարգող): Որոշ կենտրոններում երկարաժամկետ հիմքերով ներգրավված են ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավորներ: Միեւնույն ժամանակ, կամավորների գրանցման, աշխատանքի բաժանման, նրանց կառավարման եւ գնահատման ֆորմալ ընթացակարգեր գոյություն չունեն: Կամավորները աշխատում են ըստ պահանջի. համակարգողները հետեւում են, որ նրանք չխանգարեն միմյանց եւ հանձնարարություններ են տալիս նրանց հմտություններին համապատասխան:

Այսպես թե այնպես, համակարգողներից շատերը նշում են ավելի մեծ աշխատակազմ ունենալու անհրաժեշտությունը, որպեսզի աշխատանքները կատարվեն ամբողջ ծավալով, եւ Կենտրոնները չփակվեն այն օրերին, երբ համակարգողները մեկնում են գործնական այցելությունների կամ գործուղումների: Ինչ վերաբերում է համակարգողի ունակություններին, նշվել են մասնագիտական զարգացման մի շարք կարիքներ, ինչպես օրինակ անգլերեն լեզվին տիրապետելու անհրաժեշտությունը, էկոլոգիայի հետ կապված օրենսդրության եւ նորմերի գիտելիքների ընդլայնում, ավելի լավ տեղեկացվածություն ներկայումս գոյություն ունեցող էկոլոգիական շարժումների եւ

ազգային ծրագրերի մասին:

Դրամահավաք գործունեություն

Ինչպես արդեն նշվեց է, Կենտրոնները հիմնականում ֆինանսավորում են ստանում ԵԱՀԿ-ից՝ աշխատավարձերի եւ որոշ գործառնական ծախսերի համար, եւ տեղական ինքնակառավարման մարմիններից՝ ոչ-դրամային ներդրումների տեսքով: Կենտրոնների որոշ մասը ծրագրային գործողություններ է նախաձեռնում այլ կազմակերպությունների հետ համատեղ եւ սահմանափակ ֆինանսավորում ստանում կոնկրետ ծրագրային նպատակների համար (օր՝ ջրի որակի վերահսկում, ֆիլմի նկարահանում, ծառատունկ եւ այլն): Քանի որ Կենտրոնները չունեն իրավական կարգավիճակ, նրանք չեն կարող ուղղակիորեն դիմել միջազգային կազմակերպություններին դրամաշնորհային ֆինանսավորում ստանալու համար, չնայած որ համակարգողներից շատերը ծրագրային նախագծի առաջարկ գրելու փորձ եւ հմտություն ունեն:

Եղել են փորձեր ֆինանսավորում ստանալ կորպորացիաներից ու փոքր բիզնեսներից: Օրինակ՝ Հրազդանի Կենտրոնը բանակցություններ է վարել Միկա ցեմենտի գործարանի հետ շրջակա միջավայրի հետ կապված նպատակների համար ֆինանսավորում տրամադրելու վերաբերյալ, որը հենց գործարանի պարտականությունների մեջ էր մտնում: Արդյունքում նրանք համաձայնության եկան հաջորդ տարվա բյուջեի համապատասխան հոդվածի ծախսի պլանը համատեղ կազմելու վերաբերյալ, որպեսզի հատուկ ֆոնդերը ավելի արդյունավետ կերպով ծախսվեն: Ալավերդիի ու Կապանի Կենտրոնները բանակցություններ են վարում հանքարդյունաբերական ընկերությունների հետ, որոնք որոշակի ֆինանսավորում են տրամադրում բնապահպանական գործողությունների իրականացման համար: Հարցվող Կենտրոններից ոչ մեկը փորձ չունեւ Կենտրոնի գործառնական ծախսերի համար դրամահավաք կազմակերպելու ոլորտում: Այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ Կենտրոնների իմիջը եւ գործունեության ծավալները թույլ են տալիս տեղական ընկերություններից դրամահավաք կատարել՝ հայտերը պատշաճ կերպով ներկայացնելու եւ ակնկալվող ֆինանսավորումը կոնկրետ նպատակի ծառայեցնելու պայմանով:

Հասարակայնության եւ լրատվամիջոցների հետ կապերը

Հարցազրույցներում ներգրավված Կենտրոնները նշում են տեղական լրատվամիջոցների հետ լավ փոխհարաբերությունների մասին եւ բավարար փորձ նորությունների, ներկայացուցչական նյութերի եւ այլնի պատրաստման եւ տարածման հարցում: Բոլոր կենտրոնները ունեն տեղական կազմակերպությունների եւ

լրատվական գործակալությունների տվյալների ընդգրկուն բազա եւ իրենց աշխատանքը եւ հուզող խնդիրները հրապարակելու համար օգտագործում են մասնագիտական եւ անձնական կապերի բազմազանություն. *«Մեր բոլոր հայտարարությունների, մեր բոլոր ֆիլմերը, մեզ հետ կապված ամեն ինչ նրանք անում են անվճար, որ ասենք այլ կազմակերպությունների հետ հաստատ դա չի արվում:»* (Գավառի Կենտրոնի համակարգող), *«Ես ոչնչի չէի հասնի առանց ՁԼՄ-ների»* (Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Հասարակայնության հետ կապերի որոշ նյութեր նույնպես առկա են, օրինակ բուկլետներ եւ տեղեկատուները, Կենտրոնների գործունեությունը ներկայացված է նաև ԵԱՀԿ-ի ամենամյա հաշվետվություններում: Կենտրոնների հասարակական կապերի կարելու գործիք է նրանց ինտերնետային կայքը՝ www.aarhus.am, որը մշտապես թարմացվում է երեք լեզուներով: Ինտերնետ կայքը կառավարում եւ վարում է ԲՆ-ը եւ ֆինանսավորում ԵԱՀԿ-ն: Այն օգտագործվում է ոչ միայն նորությունների եւ հայտարարությունների տեղադրման համար, այլև ծառայում է որպես Կենտրոնների գործունեության, շրջակա միջավայրի օրենսդրության եւ շրջակա միջավայրի ոլորտում ընդգրկված բոլոր պետական գործակալությունների կոնտակտային տվյալների ընդհանուր տեղեկատվական աղբյուր:

Կենտրոնները օգտագործում են էլեկտրոնային հասցեների ցուցակներ՝ հայտարարությունները տարածելու համար, թեև էլեկտրոնային կապի հնարավորությունները ոչ բոլոր տեղերում են ակտիվ հաղորդակցության հնարավորություններ ընձեռում: Այդ պատճառով հեռախոսակապը նույնպես լայնորեն օգտագործվում է. *«Ես բոլոր հեռախոսահամարները անգիր եմ հիշում... Կապանում հեռախոսը հիմնականն [կապի միջոց] է»* (Կապանի Կենտրոնի համակարգող):

Եւ վերջապես, կապեր հաստատելու եւ տեղեկատվություն տարածելու նպատակով համակարգողների կողմից լայնորեն օգտագործվում է Facebook սոցիալական ցանցը:

Հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ

Համագործակցությունը պետական կառույցների հետ

Բնապահպանության նախարարությունը (ԲՆ) եւ Տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ)՝ ի դեմս տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հանդիսանում են Կենտրոնների ստեղծման ՓՀ կողմեր: Ըստ ՓՀ-ի, ԲՆ-ն աջակցում է կենտրոններին՝ տրամադրելով նրանց բնապահպանական տեղեկատվություն, միջնորդ հանդիսանալով Կենտրոնների եւ պետական այլ կառույցների միջեւ, գրականություն, օրենսդրական եւ այլ փաստաթղթեր տրամադրելով Կենտրոններին: Մարզպետարանները (որոշ դեպքերում՝ քաղաքապետարանները) հիմնականում պատասխանատու են գրասենյակների տարածքների տրամադրման եւ կոմունալ վճարների համար: Ստորեւ կուսումնասիրենք մարզային եւ տեղական կառավարման մարմինների, ինչպես նաեւ ազգային պետական կառույցների և հատկապես ԲՆ-ի դերերը:

Հարաբերությունները տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Հարցազրույցները ցույց են տալիս, որ Կենտրոնները սերտորեն համագործակցում են մարզպետարանների ու քաղաքապետարանների հետ տեղեկատվության փոխանակման ոլորտում: Այս համագործակցության համար որոշիչ դեր ունի մարզային եւ տեղական կառավարման ներկայացուցիչների ներկայությունը Փորձագետների խորհրդում. «Մեր Փորձագետների խորհուրդը... դա մեր լծակն է, այսինքն, մենք այս սեղանի շուրջ ուրիշ ֆորմատով քննարկում ենք մի հատ խնդիր և բանավոր կերպով խնդրում ենք՝ բերեք մի հատ էս հարցը քննարկենք էս ինստանցիայում: Միջնորդի դեր, խնդիրը բերում ենք պետության առաջ: Շատ ժամանակ մենք կանգնում ենք պետական կառույցի կողմ, եթե ճիշտ է աշխատում: Եթե խնդիրը հասարակության անտեղյակությունն է, մենք կանգնում ենք պետության կողքին» (Հրազդանի Կենտրոնի համակարգող):

Կենտրոնի գտնվելու վայրը նույնպես նպաստում է ավելի սերտ համագործակցությանը. «Մեր համագործակցությունը արդյունավետ է: [...] Նույնիսկ այն դեպքերում, երբ քաղաքապետարանը միջոցառում է կազմակերպում, նրանք այդ անում են մեր միջոցով՝ ասելով, որ ավելի հեշտ է կազմակերպել ամեն բան՝ օգտագործելով մեր կապերը: [...] Մենք համագործակցում ենք բոլոր վարչությունների հետ, գուցե, այն, որ մենք գտնվում ենք միեւնույն շենքում, օգնում է դրան» (Ալավերդիի Կենտրոնի համակարգող):

Քաղաքապետարանները եւ տարածքային կառավարման մարմինները հաճախ օգտագործում են Կենտրոնները որպես տեղեկատվության տարածման գործիք եւ հաճախ խորհրդակցում են նրանց հետ շրջակա միջավայրի հետ կապված հարցերի շուրջ. «Երբ էս խնդիր եմ ունենում, որի մասին պետք է տեղեկացնել

բնակչությանը, ես այն բարձրացնում եմ Կենտրոնում» (Հ. Գեուրգյան, Շիրակի մարզպետարան): «Բաներ կան, որոնց մասին ես տեղեկացվել եմ Կենտրոնում» (Կ. Թումոյան, Կոտայքի մարզպետարան): Որոշ իմաստով, Կենտրոնները կրթական դեր են խաղում տեղական կառավարման մարմինների համար. «Մենք դեռ չենք հասել այն մակարդակին, երբ համայնքի ղեկավարները կամ ավագանին կամ էլ ծառայողները հասկանան իրենց պարտավորությունները շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում կամ գիտենան, թե ինչպես պետք է դա անել... Ելնելով իմ շփումներից՝ կարող եմ ասել, որ այնտեղ, որտեղ գոյություն ունեն Կենտրոնները, համայնքի ղեկավարները, ՏԻՄ-երը ավելի տեղեկացված են, պատրաստ են լուծել նման հարցեր, համեմատած այն համայնքների հետ, որտեղ այդպիսի Կենտրոններ չկան» (Ա. Գիլոյան, Տարածքային կառավարման նախարարություն): Տարածքային կառավարման մարմինները նույապես օգտվում են այս համագործակցությունից՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության իրենց պարտավորությունները իրականացնելու համար:

Մասնակցելով Փորձագետների խորհրդում՝ տարածքային կառավարման մարմինները դառնում են Կենտրոնները կառավարման մի մաս. «Երբ Կենտրոնները կազմում են իրենց ծրագրերը, մենք մասնակցում ենք այդ գործընթացին եւ առաջարկություններ կատարում: Մենք մասնակցում ենք թե պլանավորմանը, եւ թե գնահատմանը, մարզպետարանը նույնպես իր կարծիքն է հայտնում» (Ս. Ավետիսյան, Սյունիքի մարզպետարան): Այս գործոնը խթանում է մարզպետարանի/քաղաքապետարանի եւ Կենտրոնի միջեւ համագործակցությունը եւ օգնում է «հետևորդներ» ունենալ կառավարման մարմիններում:

«Փորձագետների խորհուրդը հենց այն կառույցն է, որ օրհուս կենտրոնին տալիս է էդ հասարակական հեղինակությունը ու նաև տարբեր կառույցների հետ համագործակցելու հնարավորություն, ասենք վարչության պետը փորձագետների խորհրդի անդամ է, մի հատ բան եմ գրում էդ տեսչությանը, ինքը չի տալիս, էլ մյուս անգամ ինքը խայտառակ պիտի լինի, կամ պիտի չգա, կամ եթե գա, պիտի ասեմ բա գրություն էին գրել, դրա վերաբերյալ ինչ էք մտածում: Կամ երբեմն ինչ-որ բան ենք քննարկում, իրավիճակներ ու ինքը ասում է՝ գրեք մեզ, մենք կգրադվենք դրանով: Երբ որ էդ փորձագետների խորհուրդը նստում է, հասարակություն-պետություն էդ համագործակցությունը փոքր մասշտաբով կատարվում է» Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Միեւնույն ժամանակ, տեղական կառավարման մարմնի մասնակցությունը Կենտրոնի կառավարման գործում, ըստ որոշ հարցվողների, որոշ դեպքերում կարող է խոչընդոտել Կենտրոնի ինքնավարությանը: «Կենտրոնը որոշ չափով մարզպետարանի վերահսկման տակ է գտնվում: [...] Դա դրական էր եւ անհրաժեշտ կայացման փուլում՝ պետության եւ հանրության միջեւ համագործակցություն իրականացնելու համար: Սակայն այսօր մենք արդեն անցել ենք այդ փուլը» (Ա.

Ղազարյան, Շրջակա միջավայրի անվտանգության եւ ժողովրդավարության ՀԿ):

«Մարզպետարանը Կենտրոնը դիտարկում է որպես լրացուցիչ ռեսուրս, որ կարելի է օգտագործել... Այժմ նա դիտում է Կենտրոնը որպես գլխացավանք, հոգս, որ պարտավորություններ ունես, որ պետք է կատարես... Մակայն կան այնպիսի Կենտրոններ, որոնք նախընտրում են շառից հեռու մնալ, որովհետև մեզ պահող կառույց է և երբ որ ուզենա մեզ կարող է փակել» (Ս. Մարտիրոսյան, Սախարովի մարդու իրավունքների կենտրոն, Գյումրի):

Կենտրոնների ինքնավարությունը եւ պետության վերահսկումից անկախ լինելը հրատապ է դառնում այն դեպքերում, երբ Կենտրոնները ստիպված են ընդդիմանալ մարզպետարանների որոշումներին կամ պաշտպանել իրենց իրավունքները: Գյումրիում Կենտրոնի համակարգողը դիմել էր դատարան (մի ՀԿ-ի անունից), որովհետև մարզպետարանը ծառահատումներ էր կատարել առանց համապատասխան փաստաթղթեր ունենալու, եւ մի քանի օրից մարզպետարանի ներկայացուցիչները փակեցին Կենտրոնի գրասենյակը. *«Մարզպետն ասաց. «դե իրենք իմ ենթակայության տակ են, ես Գեւորգից բանալին կվերցնեմ, եւ հետո մենք նոր ընտրություն կկատարենք» (Հ. Գասպարյան, Շիրակիի մարզպետարան):*

Նույնիսկ այն Կենտրոնները, որոնք որեւէ կերպ չեն ընդդիմանում տարածքային կառավարման մարմիններին, ընդունում են, որ իրենց գործունեությունը կարող է դիմադրության առիթ դառնալ: Կենտրոնները ստիպված են դիմել տարբեր կառույցներին խնդիրները լուծելու նպատակով՝ ներառյալ տեղական եւ տարածքային կառավարման հետ կապված խնդիրները, եւ դա հաճախ դիտարկվում է որպես ընդդիմություն. *«մենք դիմում ենք ավելի բարձր մակարդակի կառույցներին, իսկ միջին մակարդակի մարմինները իրենց վիրավորված են զգում» (Հրազդանի Կենտրոնի համակարգող)²:*

Ընդհանուր առմամբ, Կենտրոնների հարաբերությունները տարածքային կառավարման մարմինների հետ բավականին բազմիմաստ են. մի կողմից, մարզպետարանները ՓՀ-ի կողմ են կազմում եւ հետեւաբար հանդես են գալիս որպես Օրհուս կենտրոնների գործունեության դոնորներ, մյուս կողմից, դրանց ներկայացուցիչները Փորձագետների խորհրդի անդամներ են, հետեւաբար Կենտրոնի մաս են կազմում, երրորդ, մարզպետարանները, պետական եւ ոչ պետական այլ կազմակերպությունների թվում, համագործակցում են Կենտրոնների հետ տեղեկատվության փոխանակման և հանդիպումների կազմակերպման հարցերում եւ, վերջապես, նրանք դառնում են հակառակորդ կողմ այն դեպքերում,

² Պաշտոնապես, այս քայլը մեկնաբանվեց որպես ՓՀ գործողության մեկ տարվա ավարտով, քանի որ ըստ ՓՀ-ի մեկ տարի անց մարզպետարանը պետք է հոգար Կենտրոնի ֆինանսական ծախսերը, իսկ քանի որ մարզպետարանը նման հնարավորությունը չունեւ, ստիպված էր դադարեցնել Կենտրոնի գործունեությունը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս գործողությունը կատարվեց շատ ավելի ուշ, քանի ՓՀ ստորագրման մեկ տարվա ավարտն էր:

երբ Կենտրոնները ստիպված են քարոզարշավ կազմակերպել ընդդեմ մարգալետարանների կողմից կայացրած որոշումների:

Գործոնների նման բարդ հանգույցը հանգեցնում է Կենտրոնների կարգավիճակի, տեղակայման եւ Խորհրդի կազմի մասին կարծիքների զանազանությանը, որը կքննարկվի ստորեւ եւ որը կարող է լուծում ստանալ միայն այն դեպքում, երբ բոլոր նշված՝ աջակցության, ղեկավարման, համագործակցության եւ ընդդիմության դերերը, կներդաշնակվեն յուրաքանչյուր դերի ավելի հաջող եւ հստակ կարգավորման դեպքում:

Համագործակցությունը Բնապահպանության նախարարության հետ

Երեւանի Օրհուս կենտրոնի կարգավիճակը տարբերվում է մյուսներից. այն ամբողջովին ֆինանսավորվում է ԲՆ-ի կողմից: Այսպես, Կենտրոնի համակարգողը պաշտոնապես նախարարության աշխատակից է հանդիսանում եւ հաշվետու է ԲՆ Տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավարին: Ինչպես նշում է Կենտրոնի համակարգողը, թեև նա նախարարության կողմից որեւէ ձևում չի զգում, նրա կարծիքով անկախ կարգավիճակը Կենտրոնին ավելի շատ հնարավորություններ կընձեռի: Օրինակ՝ համակարգողը երբեմն մասնակցում է ստորագրահավաքներին ոչ թե Կենտրոնի անունից, այլ որպես անհատ՝ շահերի բախումից խուսափելու համար: Միեւնույն ժամանակ, Նախարարության շենքում գտնվելը այս դեպքում որոշ առավելություններ է տալիս. *«Մենք դիմում ենք Նախարարությունը տարբեր հարցերով, նամակներ ենք գրում, մեր քննարկումներին փորձագետներ ենք հրավիրում, եւ մինչեւ այժմ ոչ ոք մեզ ոչ մի հարցում չի մերժել»* (Երեւանի Կենտրոնի համակարգող):

Մակայն շատ Կենտրոններ Նախարարության հետ նման սերտ համագործակցություն չունեն՝ չնայած ԲՆ կողմից ՓՀ-ով ստանձնած պարտավորությունների. *«Բացարձակապես գոհ չենք բնապահպանության նախարարության աշխատանքից, որևէ կենտրոնից չեք լսի, որ ասի, թե բնապահպանության նախարարությունը էսինչ հարցով մեզ աջակցել է»* (Հրազդանի Կենտրոնի համակարգող), *«Բնապահպանության նախարարության հետ շատ վատ [հարաբերություններ ունենք], որովհետև ես ջրի անալիզ եմ վերցրել, ուղարկել ենք, [...]։Գնում եմ բնապահպանության նախարարություն, չեն տալիս, պաշտոնական պատասխան չեն տալիս: [...] Նախարարությունը դարձել է շատ փակ կառույց եւ չի ցանկանում համագործակցել»* (Կապանի Կենտրոնի համակարգող): Ընդհանուր առմամբ, Օրհուս կոնվենցիայի դրույթների չիրականացման փաստը նշվում է որպես Օրհուս Կենտրոնների գործունեության լուրջ խոչընդոտ:

Մյուս կողմից, Նախարարությունը ևս դժգոհ է Կենտրոնների որոշ գործողություններից. *«նրանք որոշակի գործողություններ են կատարել առանց նախարարությունից հավանություն ստանալու: Օրինակ, նրանք նամակ են հղել*

Նախագահին, որը բոլորովին իրենց գործը չէ: Դա ոչ նրանց իրավասությունների շրջանակում է, ոչ էլ այն հարցն է, որն իրենք պետք է լուծեն» (Ս. Պապյան, Փոխնախարար, ԲՆ): Նախարարության իրավաբանական վարչության պետը իր դժգոհությունն էր հայտնում Կապանի Կենտրոնից, որը մասնակցել է Նախարարության դեմ դատարան դիմելու գործընթացին՝ Կապանի էկոլոգիական խնդիրներից մեկի վերաբերյալ Նախարարության կողմից գործողություններ չձեռնարկելու վերաբերյալ:

Այս խնդիրները վեր են հանում Կենտրոնի դերի եւ գործունեության շրջանակների ընկալման տարբերությունները, որ առկա են երկու կողմերի մոտ, ինչպես նաեւ բացահայտում են շահերի բախումները, որոնք Կենտրոնները պետք է հաշվի առնեն իրենց գործողությունների մասին որոշումներ կայացնելիս: Հարցվողներից մեկը ասում է. «Ո՞վ է Կենտրոններին լիազորում՝ Նախարարությունը, թե, Կենտրոններն իրենք: Այսօրվա սցենարը չի գործում, լիարժեք չի գործում, որովհետև ինչ-որ կողմեր դժգոհ են: [...] Այս ֆորմատի արդյունավետ իրականացման համար քաղաքական կամք է անհրաժեշտ: Կենտրոնը չպետք է դատարան դիմեր, այն պետք է միջնորդ օղակ հանդիսանար, եւ հարցը պիտի պաշտոնյաների միջոցով լուծվեր: Այսօրվա օրով բոլոր խնդիրները թեժանում են: Ու էդտեղ կենտրոնն արդեն ինքը պիտի իմանա, կամ ինքը ձենը կտրում, նստում է, կամ հակառակվում է: Եթե ինքը ֆունկցիա չկատարի, այն մեռած կառույց կդառնա: [...] Այսօրվա քաղաքական կամքի բացակայության պարագայում պիտի կողմնորոշվի կամ այս կողմ, կամ այն կողմ» (Ս. Այվազյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ):

Այսպիսով, ինչպես եւ տեղական կառավարման մարմինների դեպքում էր, Կենտրոնների հարաբերությունները կառավարության հետ բավականին խճճված են. Կենտրոնները ստեղծվել են պետության մասնակցությամբ Օրիուս կոնվենցիայի դրույթները իրագործելու նպատակով, դրանք կապում են պետական կառույցները եւ քաղաքացիական հասարակությունը եւ հավատարիմ են շրջակա միջավայրի պաշտպանության առաքելությանը: Համապատասխանաբար, դրանք պետք է պետության ներկայացուցիչ, միջնորդ եւ երբեմն ընդդիմադիր կողմ հանդիսանան:

Կենտրոնների այս բազմակողմանի դերը պետք է ընդունվի բոլոր շահագրգիռ կողմերի կողմից, եթե Կենտրոնները շարունակելու են իրենց գործունեությունը նույն սկզբունքներով, կամ էլ նրանց գործունեությունը պետք է հստակորեն սահմանափակվի, եթե հիմնադիրները համարեն, որ սահմանափակումը հետագա գործունեության համար ավելի լավ տարբերակ է:

Համագործակցությունը ՀԿ-ների եւ միջազգային կազմակերպությունների հետ

Կենտրոնները չեն դիմում դրամաշնորհային մրցույթների, քանի որ չունեն իրավական կարգավիճակ, այնուհանդերձ, նրանք տարբեր ծրագրեր են իրականացնում ԵԱՀԿ-ի

աջակցությամբ, ինչպես նաև այլ ՀԿ-ների համագործակցությամբ: Հաճախ համատեղ ծրագրերի իրականացման սխեման հետեւյալն է՝ Կենտրոնը ՀԿ-ի հետ համատեղ քննարկում է ծրագրային գաղափարը եւ աջակցում է ծրագրային առաջարկ գրելու գործընթացին: Օրինու Կենտրոնի մասնակցությունը, ինչպես նաև Համակարգողի փորձագիտական աշխատանքը, ներկայացվում են ծրագրում որպես ներդրում: Ծրագիրը իրականացվում է համատեղ ուժերով, իսկ հաշվետվությունները ներկայացնում է դոնորի հետ պայմանագիր կնքած ՀԿ-ն:

ՄԱԶԾ ՇՄՀՀ (UNDP GEF) ծրագիրը համագործակցում է Կենտրոնների հետ ծրագրի շնորհանդեսների կազմակերպման եւ տեղական ՀԿ-ներին հայտեր ներկայացնելու եւ ծրագիր իրականացնելու գործում շարունակական խորհրդատվության տրամադրման հարցերում: Մյուս միջազգային կազմակերպությունները դեխքից դեպք են համագործակցում Կենտրոնների հետ. երբ մարզում շրջակա միջավայրի հետ կապված հանդիպում է պլանավորվում կամ նախագիծ է իրականացվում, Կենտրոնները հաճախ հանդես են գալիս որպես միջորդ, հրավիրելով ՀԿ-ներ, լրատվամիջոցներ եւ այլն, տրամադրելով կազմակերպչական աջակցություն, հանդիպման վայր եւ անհրաժեշտության դեպքում՝ տեղական լրատվամիջոցներով հեռարձակում: *«Մենք շատ բավարարված ենք մեր համագործակցությամբ, մենք նրանց ասում ենք միայն, որ մեզ հարկավոր է այսպիսի միջոցառում, եւ նրանք այն կազմակերպում են (Կ. Մանվելյան, ԲՀՀ, WWF):*

Տեղական բնապահպանական հասարակական կազմակերպությունները նույնպես օգտագործում են համագործակցության հնարավորությունները, հատկապես Էկոդաշինքի անդամները: Մի կողմից նրանք օգտվում են Կենտրոնների ռեսուրսներից իրենց գործունեության համար, մյուս կողմից Կենտրոններին են տրամադրում Էկոլոգիայի ոլորտի արդի միտումների եւ նորությունների վերաբերյալ իրենց փորձագիտությունն ու տեղեկատվությունը: Տեղեկատվության փոխանակման առումով Կենտրոնները սերտորեն համագործակցում են «Էկոլուր» ՀԿ-ի հետ: Բացի Էկոլուրից, Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն կենտրոնի, Խազեր ՀԿ-ի եւ այլ կազմակերպությունների փորձագետները անհրաժեշտության դեպքում անվճար սեմինարներ եւ ներկայացումներ են իրականացնում Կենտրոններում:

Ինչ վերաբերում է մարզային ՀԿ-ներին, այստեղ համագործակցությունը իրականացվում է ոչ միայն բնապահպանական, այլ նաև այլ կազմակերպությունների հետ, հատկապես եթե հաշվի առնենք, որ որոշ մարզերում բնապահպանական կազմակերպությունները շատ սակավաթիվ են: ՀԿ-ները Կենտրոններին դիմում են ռեսուրսների, ուղղորդման եւ խորհրդատվության, ինչպես նաև համատեղ գործունեության եւ քարոզարշավների կազմակերպման համար: Ակնհայտ է, որ մարզերում Կենտրոնները ՀԿ-ների համար կապող օղակ են հանդիսանում. *«անցյալ տարի մենք ստեղծել ենք տեղական ՀԿ-ների կոալիցիա եւ մշտապես կապ ենք պաշտպանում միմյանց հետ» (Ալավերդիի Կենտրոնի համակարգող), «Օրինու*

կենտրոնները չեն մրցակցում ՀԿ-ների հետ, հետևաբար նրանք ի վիճակի են համախմբել այս դաշտում գործող ՀԿ-ները» (Գ. Ղազինյան, ԵԱՀԿ): Երբեմն այդ գործոնը նույնիսկ օգնում է ՀԿ-ներին երկխոսություն սկսել. «*Հաճախ որոշ կազմակերպություններ չեն ցանկանում հանդիպել մեզ հետ, բայց մենք հանդիպումը կազմակերպում ենք Կենտրոնում... Այդ հանդիպման ժամանակ մենք կարող ենք միմյանց ասել, ինչ հարկավոր է»* (Ա. Ղազարյան, Էկոլոգիական անվտանգության եւ ժողովրդավարության ՀԿ, Կապան):

Իրենց հերթին կայացած տեղական ՀԿ-ները կենտրոններին են տրամադրում իրենց փորձագիտական գնահատականները. «*ՀԿ-ները մեզ շատ են օգնում: Մենք միայն չորս տարի է, ինչ գործում ենք, մինչդեռ կան կազմակերպություններ, որոնք արդեն 10 տարի է, ինչ գործունեություն են ծավալում տվյալ ոլորտում՝ Սեւանում, Մարտունիում... Սախարովի կենտրոնը օրենսդրական ոլորտի հետ կապված հարցերում մեծ աջակցություն է տրամադրում»* (Գավառի Կենտրոնի համակարգող):

ԵԱՀԿ-ի դերը

Հանդիսանալով Օրհուս կենտրոնների հիմնադիրը եւ ներկայումս Կենտրոնների գործունեության հիմնական դոնորը՝ ԵԱՀԿ-ն Կենտրոնների կողմից ավելի շատ ընկալվում է որպես խորհրդատու, քան դոնոր: Շատ դեպքերում համակարգողները դիմում են ԵԱՀԿ խորհրդատվություն ստանալու որոշակի հարցի կամ գործողություն կատարելու համար: Այնուհանդերձ, Կենտրոնների համակարգողներին ինքնուրույնություն է տրվել որոշումների կայացման եւ Կենտրոնի առօրյա գործառնությունները կատարելու համար: «ԵԱՀԿ-ն մեծ դեր է խաղում [Կենտրոնի գործունեության մեջ], [...] ԵԱՀԿ-ն ճնշում չի գործադրում, այլ ցուցադրում է, որ կան տարբեր հնարավորություններ եւ լուծումներ, [...], այնպես որ դու կարող ես որոշել, որն է ճիշտը» (Գավառի Կենտրոնի համակարգող): «ԵԱՀԿ-ն մեզ ազատություն է տալիս եւ ուզում է, որ տվյալ կառույցը զարգանա էվոյուդցիոն եղանակով: ԵԱՀԿ-ն երբեք ինձ վրա ճնշում չի գործադրել, նույնիսկ երբ ես հակառակ տեսակետ եմ ունեցել» (Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Այսպես թե այնպես, Կենտրոնները միջոցառումների եւ պարբերական (եռամսյակային, կես տարվա եւ տարեկան) հաշվետվություններ են ներկայացնում ԵԱՀԿ-ին՝ ըստ ԵԱՀԿ-ի համաձայնագրի մեջ սահմանված կանոնների: Միեւնույն ժամանակ այդ հաշվետվությունները ավելի շատ դիտվում են որպես տեղեկատվության փոխանակման ու տարածման միջոց, քանի որ դրանք տեղադրվում են www.aarhus.am ինտերնետային կայքում եւ հասանելի են մյուս կենտրոններին, շահագրգիռ կողմերին եւ լայն հասարակությանը:

Կենտրոնների գործունեության մեջ ԵԱՀԿ-ի հիմնական դերերից մեկը շահերի պաշտպանության հզոր գործիք լինելն է. «ԵԱՀԿ-ն կատարում է տեսանելի եւ անտեսանելի դերեր: Երբ ինձ մոտ մի բան չի ստացվում, ԵԱՀԿ-ի կողմից զանգ է կատարվում, [...], միայն մեկ զանգ մարզպետին եւ դրանով խնդիրը լուծված է: Մյուս կողմից, այն փաստը, որ մենք ԵԱՀԿ-ից ենք, արագացնում է որոշումների կայացումը, նույնիսկ առանց զանգի» (Հրազդանի Կենտրոնի համակարգող): ԵԱՀԿ-ի ներկայացուցիչը նաեւ նշեց այնպիսի դեպքեր, երբ ԵԱՀԿ-ի միջամտությունը վճռական է եղել առաջացած որոշ խնդիրների ժամանակ՝ սկսած պետական կառույցների կողմից տեղեկություններ ստանալուց մինչեւ Կենտրոնի գործունեության վերականգնումը (Գյումրիի Կենտրոնի դեպքում, դեսպանի միջամտությունը օգնեց լուծել կենտրոնի վերաբացման խնդիրը): Հրազդանի Կենտրոնի համակարգողի կողմից նշված անտեսանելի դերը՝ ԵԱՀԿ-ի հետ կապված Կենտրոնների իմիջը, լայնորեն ճանաչվում է թե Կենտրոնների համակարգողների եւ թե շահագրգիռ կազմակերպությունների կողմից. «[ԵԱՀԿ-ի] իմիջը թույլ է տալիս նրանց հոգեբանորեն ազատ լինել» (Ա. Ղազարյան, Էկոլոգիական անվտանգության եւ ժողովրդավարության ՀԿ, Կապան), «ԵԱՀԿ-ն բավականին լուրջ կազմակերպություն է մեր բոլորի աչքում [...]: Այդ ամենը

բոլորը բարձրացնում և նաև Օրհուս կենտրոնի իմիջը [...], Եթե միայն ՀԿ-ներով ինչ-որ տեղ հավաքվեինք, ասեինք, երևի էն ազդեցությունը չէր ունենա, ինչքան որ այստեղ ենք հավաքվում, ասում և ԵԱՀԿ-ի լոգոի ներքո այդ որոշումները կայացվում են:» (Վ. Մարտիրոսյան, Խուստուփ ՀԿ, Կապան):

Հետագա զարգացում

Կենտրոնների ապագայի տեսլականը

Կենտրոնների ապագայի իրենց պատկերացումներում հարցվողները նշում են հետևյալ հատկանիշները՝ հզոր, կայուն ցանց, որը լայն ազդեցություն ունի ոլորտում, համալրված է կոմպետենտ եւ բավարար քանակով մարդկային ռեսուրսներով, հազեցած է բոլոր անհրաժեշտ սարքերով, միավորում է բնապահպանության ոլորտում գործող կազմակերպությունները, վայելում հանրության վստահությունը եւ հարգանքը. *«այնպես որ մարդիկ գիտեն՝ եթե նրանք դիմում են Կենտրոնին, իրենց խնդիրը անպայման լուծվելու է»* (Երեւանի Կենտրոնի համակարգող):

Ինչ վերաբերում է գործունեության շրջանակին, հարցվողների կողմից բազմաթիվ առաջարկություններ նշվեցին Կենտրոնների ներկայիս գործունեության հստակեցման եւ բարելավման վերաբերյալ: Մասնավորապես, ԲՀՀ ներկայացուցիչը նշեց մոնիտորինգի եւ դրանից բխող շահերի պաշտպանության աշխատանքի անհրաժեշտությունը, ԲՆ ներկայացուցիչը նշեց, որ քանի որ այժմ յուրաքանչյուր մարդ ունենալու է իր էկոլոգիական ծրագիր, Օրիուս կենտրոնները կարող են օգնել տարածքային կառավարման մարմիններին այս ծրագրի մշակման գործում եւ հետագայում վերահսկեն իրականացման գործընթացը:

Որոշ հարցվողներ մտահոգված էին գործնական լուծումների հարցով. *«քանի որ հարցին լուծում չի տրվում, այսինքն 10 տարի էլ շարունակվի էդ քննարկումները և պլատֆորմն էլ լինի շատ իդեալական վիճակում, արդյունք չկա դրանից: Ոչ մի բնապահպանական հարց այսօր Հայաստանում չի լուծվում, ինչքան քննարկես: Բայց որ կառույցը կայացած է, եթե լինի առանձին, իր ստրուկտուրայով, ինքը ավելի շատ գործողություններ կիրականացնի, քան այսօր: Կօժանդակի ավելի շատ այդ հարցերի լուծմանը»* (Ա. Ղազարյան, Էկոլոգիական անվտանգություն եւ ժողովրդավարություն ՀԿ, Ղափան): Նմանապես, Հրազդանի Կենտրոնի համակարգողը որպես Կենտրոնների գլխավոր առաքելություն է համարում խնդրի պատճառի բացահայտումը եւ ինստիտուցիոնալ լուծումների տրամադրումը:

ՀԿ-ների համախմբումը եւ նրանց համար մենտորի դերում հանդես գալը հաճախ են նշվում որպես Կենտրոնների գործունեության անհրաժեշտ բաղկացուցիչներ. *«նախընտրելի կլինի, որ Կենտրոնների համակարգողները աշխատեն տեղերում ՀԿ-ներին խորհրդատվություն տրամադրելով այն մասին, թե ինչ ընթացիկ ծրագրեր կան, համաֆինանսավորման որ աղբյուրներն են առկա, ինչպես բանակցություններ վարել դոնորների հետ... կամ եթե SFU-ը ունի որոշակի բյուջե, տեղեկացնել ՀԿ-ներին, որ կա ֆինանսավորման այդպիսի հնարավորություն»* (Հ. Ղազարյան, ՄԱԶԾ ՇՄՀՀ):

Օրիուս կենտրոնների գործունեության շրջանակների վերաբերյալ համապարփակ եւ հստակ ռազմավարության անհրաժեշտությունը նշվել է համակարգողների կողմից որպէս հետագա գործունեության անհրաժեշտ հիմք: Կառավարման դրույթներին նվիրված նախորդ բաժնում արդեն նշվեց այն մասին, որ Կենտրոնի գործունեությունը զգալիորեն կախված է համակարգողի անհատականությունից: *«Մեր իրավասությունները հստակ չեն, ՓՀ-ը շատ աղոտ է ձեւակերպված [...]: Այստեղ համակարգողի անհատականությունը հիմնական դեր է խաղում, բայց դա այդպէս չպետք է լինի: Մենք պետք է հստակ պատկերացնենք մեր գործունեության շրջանակները»* (Գլուխի Կենտրոնի համակարգող): *«Դե մենք մշակել ենք գործողությունների ընթացակարգեր, այն, թե ինչպէս ենք աշխատելու, սակայն ես կցանկանայի ունենալ մի հստակ մեխանիզմ, բոլորի համար նախատեսված աշխատանքային պլան [...]: Մենք կոնկրետ սկզբունք ունենանք, թե ինչի հիման վրա ենք աշխատում, որ սա հաստատված է, որ հետո ոչ մեկ չասի՝ դու ինչու ես դա անում: Ես անում եմ այն, ինչ փաստաթղթով հաստատված է, կնքված է, 1000 հոգի էլ տակը ստորագրել է:* (Գավառի կենտրոնի համակարգող):

Այսպիսով, հաշվի առնելով, որ գոյություն ունեն Օրիուս կենտրոնների ընդհանուր ուղղորդող սկզբունքներ, անհրաժեշտ է հատուկ ռազմավարություն ունենալ հայկական կենտրոնների համար, որտեղ հստակ կներկայացվի Կենտրոնների գործունեության շրջանակները եւ ուղղորդող սկզբունքները:

Իրավական կարգավիճակը

Տվյալ հաշվետվության նպատակներից մեկն է պարզել Օրիուս Կենտրոնների ու շահագրգիռ կողմերի տեսակետները Կենտրոնների հետագա կարգավիճակի վերաբերյալ: Համարյա բոլոր հարցվողները նշում են, որ Կենտրոնները պետք է իրավական կարգավիճակ ստանան, որ կարողանան լիովին օգտագործել իրենց ներուժը ու հզորացնեն կազմակերպչական եւ հատկապէս ֆինանսական հիմքերը:

Անդրադառնալով Կենտրոնների հետագա կարգավիճակին՝ հարցվողների մեծ մասն օգտագործում է *անկախություն* հասկացությունը որպէս հիմնական գաղափար: Այնուհանդերձ, անկախության մասին պատկերացումները շատ տարբերվում են միմյանցից՝ սկսած իր գործունեության մեջ ինքնուրույն պետական կազմակերպություն լինելուց մինչեւ հասարակական կազմակերպությունը, որտեղ պետական մարմինները որոշումների կայացման մեջ որեւէ մասնակցություն չունեն:

Պետական ոչ առեւտրային կազմակերպության (ՊՈԱԿ) գաղափարը առաջարկվել է ԲՆ փոխնախարարի կողմից. *«ՊՈԱԿ-ի առավելությունն այն է, որ պահպանման ծախսերը ֆինանսավորվելու են պետական բյուջեից, հաշվետվությունները ներկայացվելու են պետական մարմինն եւ տրամադրվելու է ֆինանսավորում: Սակայն, մյուս կողմից, Հիմնադրամ ստեղծելու դեպքում հոգաբարձուների խորհուրդ կլինի, և ինչ-որ չափով*

ավելի անկախ կլինեն: Բայց մենք չենք կարող հիմնավորել Հիմնադրամի ստեղծումը եւ այդ դեպքում չենք կարող տվյալ որոշումը ներկայացնել կառավարությանը, քանի որ ի հայտ կգան ֆինանսավորման խնդիրներ: Դա պետք է լինի ՊՈԱԿ, այլապես մենք չենք կարող [հիմնավորել եւ ֆինանսավորում պահանջել]» (Ս. Պապյան, ԲՆ):

Պետական կազմակերպություն ստեղծելու հիմնական հակափաստարկը Կենտրոնների՝ միջնորդի դերի վտանգելն է. «Եթե այն դառնա եւս մեկ պետական կառույց, ինչու՞ պետք է մարդիկ մեզ դիմեն, այդ դեպքում ավելի լավ է նրանք ուղղակի գնան քաղաքապետի մոտ» (Ալավերդիի Կենտրոնի համակարգող): Տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները տեսնում են պետական կազմակերպություն դառնալու վտանգները. «Եթե Կենտրոնը որեւէ պետական կառույցի սեփականություն լինի, ես չեմ կարծում որ նրանք լինեն նույնքան անկողմնակալ, որքան հիմա են» (Ս. Բաբախանյան, Հրազդանի քաղաքապետարան), «Օրիուս կենտրոնները այնպիսի կառույցներ են, որոնք պետք է անկախ լինեն... Այլապես հնարավոր չի լինի այդ անկանխակալ քննարկումները եւ մոտեցումները ապահովել» (Ս. Ավետիսյան, Սյունիքի մարզպետարան): «Լավ կլինի, եթե կենտրոնները Հիմնադրամ լինի, որ անկախ լինի: Եթե ինչ-որ կենտրոն համակարգվի Նախարարության կողմից, այն կդառնա նախարարության կամակատարը» (Հ. Գասպարյան, Շիրակի մարզպետարան):

Միեւնույն ժամանակ, Կենտրոնների կառավարման հարցում պետության մասնակցության կարելորդությունը շեշտվում է հարցվողներից շատերի կողմից. «Կենտրոնները ի սկզբանե ստեղծվել են եւ հիմնված են հենց այդ համագործակցային համասեփականության գաղափարի վրա» (Ս. Այվազյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ):

Հարցվողների ճնշող մեծամասնությունը առաջարկել է հիմնադրամի տարբերակը՝ հավասարակշռված կառավարմամբ, որտեղ պետական, տեղական եւ միջազգային կազմակերպությունները համամասնաբար կներկայացվեն որոշումներ կայացնող մարմնում: «Օրիուս կենտրոնը պետք է կամուրջ ծառայի պետական եւ հասարակական կառույցների միջեւ, և կառավարումը պետք է իրականացվի համամասնորեն պետական եւ հասարակական կառույցների կողմից» (Գյումրիի Կենտրոնի համակարգող):

Հիմնադրամի կարգավիճակը մարզերում իր ներկայացուցչություններով լավագույն տարբերակ է ճանաչվել, որը կերաշխավորի Կենտրոնների անկախությունը, միջնորդի դերի շարունակականությունը, խնդիրների համագործակցային լուծումը եւ կայունության հիմքը: Այս տարբերակը քննարկվել է Ծաղկաձորի արտագնա գործնական հանդիպման ժամանակ եւ ստացել է Կենտրոնների համակարգողների միաձայն հավանությունը:

Հոգաբարձուների խորհուրդ

Ինչպես նշվեց, տարբեր կառույցների հավասար ներկայացուցչությունը ամենաընդունելի տարբերակն է հարցվողների շրջանում, և հավանության է արժանացել արտագնա գործնական հանդիպման մասնակիցների կողմից: «Մենք առաջարկել ենք չորս սեկտոր՝ միջազգային, կառավարություն, ՀԿ-ներ եւ համայնք: Սակայն ԵԱՀԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների ներկայությունը տվյալ դաշտում անպայման պետք է լինի, եւ նրանք պետք է ստանձնեն գլխավոր դերեր [...], քանի որ միջազգային կառույցների ներկայության պարագայում աշխատանքային ոճն այլ է» (Հրազդանի Կենտրոնի համակարգող): «Հավասարակշռություն պետք է պահպանվի. ներկայացված լինեն և պետական մարմինները, և գիտնականները, և հասարակությունը: Նաև այն նախարարությունները, որոնք անմիջապես առնչվում են այդ հարցերի հետ՝ տարածքային կառավարման, բնապահպանության» (Ս. Պապյան, ԲՆ):

Որոշ հարցվողների կարծիքով անհրաժեշտություն չկա պետության ներկայացուցիչներին ներգրավել Կենտրոնների կառավարման գործում. «Երբ առաջարկում են նախարարության ներկայացուցիչներին ներգրավել Հոգաբարձուների խորհրդում, իմ կարծիքով դա ճիշտ գաղափար չէ: [...] Նրանք կտանեն գործը այլ ուղղությամբ: Կենտրոնները իրականում ընդդիմություն են, դժվար թե Նախարարության ներկայացուցիչը կարող է հետաքրքրված լինել... կամ կասի ոչ, դա չի կարելի թույլ տալ... Ես ուզում եմ ասել, որ ինքնուրույնությունը, անկախությունը անհայտանալու են» (Ա. Համբարձումյան, Խազեր ՀԿ), «Ես չեմ կարծում, որ պետությունը պետք է ներգրավված լինի: Ինչքան ավելի անկախ լինեն նրանք, այնքան ավելի արդյունավետ կլինի իրենց գործունեությունը եւ ավելի շատ ազատություն կլինի իրենց գործողություններում» (Կ. Մանվելյան, ԲՀՀ):

Այնուհանդերձ, հարցվողների մեծ մասը կողմ է պետական կառույցների ներգրավմանը, մի պայմանով, որ պետության ներկայացուցիչները չեն կազմելու Խորհրդի մեծամասնությունը եւ ներկայացնելու են պետական մարմինների բազմազանություն. «Հոգաբարձուների խորհուրդը պետք է կազմված լինի 1/3՝ պետական մարմինների, 1/3՝ միջազգային կազմակերպությունների, 1/3՝ հասարակական կազմակերպությունների ոլորտի ներկայացուցիչներից: Այս դեպքում մենք լիովին կբացառենք, որ պետությունը մեծ միջամտություն կարողանա ունենալ» (Գյումրիի Կենտրոնի համակարգող): Առաջարկություններ կան նաեւ անկախ փորձագետներ եւ առևտրային ոլորտի ներկայացուցիչներ ներգրավելու վերաբերյալ:

Ծաղկածորյան քննարկումների արդյունքում ստեղծվեց Հոգաբարձուների խորհրդի անդամների կազմի հետեւյալ բանաձևը՝

- ԵԱՀԿ ներկայացուցիչ
- ԲՆ ներկայացուցիչ

- ՏԿՆ ներկայացուցիչ
- Էկոլոգիական ՀԿ-ի ներկայացուցիչ
- Գիտությունների ակադեմիայի փորձագետ
- Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ
- Առևտրային ընկերության ներկայացուցիչ

Այսպիսով, ՀԽ-ում կարելի է ընդգրկել յոթ անդամներ, որտեղ կլինեն երկումիջազգային կազմակերպության ներկայացուցիչներ, երկու պետական մարմինների ներկայացուցիչներ, մեկ տեղական ՀԿ, մեկ գիտնական եւ մեկ գործարար: Տվյալ սցենարը հիմնականում համապատասխանում է հարցազրույցների ժամանակ արտահայտված տեսակետներին, այն ապահովում է հիմնական դերակատարների մասնակցությունը եւ Կենտրոններին անկախություն է երաշխավորում: Անդամների այս քանակը (7 հոգի) նույնպես օպտիմալ է՝ խմբային դինամիկայի տեսակետից:

Հիմնադրամի հիմնադիրների կազմը առանձին չի քննարկվել հարցվողների կողմից, այնուհանդերձ մտազրոհի ժամանակ ՀԽ-ի կազմին նմանատիպ մի կազմ է առաջարկվել՝ ներառելով պետական կառույցների, ԵԱՀԿ-ի, տեղական կառավարման մարմինների (այն պարագայում, եթե Կենտրոնները գրանցվեն տեղում), ինչպես նաեւ ազգային ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Օրհուս Կենտրոնների ներկայիս համակարգողներին որպես հիմնադիր դիտարկելու տարբերակը նույնպես քննարկվել է որպես այլընտրանք այն դեպքում, եթե ԵԱՀԿ-ն չկարողանա որպես հիմնադիր հանդես գալ իր կարգավիճակի պատճառով, ինչպես նաեւ պետության լիակատար սեփականությունից եւ բյուրոկրատիայից խուսափելու նպատակով:

Համակարգողները նաեւ համաձայնեցին, որ Փորձագետների խորհրդի ինստիտուտը պետք է պահպանվի, թեև կառավարման մեխանիզմները կփոխվեն, եւ այդ խորհուրդները հանդես կգան արդեն խորհրդատվական դերում: Այս պատճառով անհրաժեշտ կլինի վերանայել Խորհրդի կազմը եւ ընթացակարգերը, որպեսզի այն ակտիվ եւ արդյունավետ դառնա բոլոր վայրերում:

Կառուցվածքը

Արդյունավետ գործունեություն ունենալու համար միավորված կառույցի ստեղծումը առավել շատ է նշվում հարցվողների կողմից Կենտրոնների ապագայի նրանց տեսլականում. *«Պետք է լինի մեկ Օրհուս Կենտրոն, իսկ բոլոր մարզային Կենտրոնները կձառայեն որպես ստորաբաժանումներ, այսպիսով դա կլինի մեկ Հիմնադրամ»* (Ա. Գաբրիելյան, ԲՆ):

Դիտարկվել է նաեւ ֆինանսավորման եւ խորհրդատվական ծառայություններ ապահովող մեկ կազմակերպության հովանոցի տակ գործող առանձին մարզային կազմակերպությունների գրանցման տարբերակը, բայց Կենտրոնները թուլացնելու եւ

նրանց միջեւ մրցակցություն առաջացնելու վտանգը, ինչպես նաև լրացուցիչ ադմինիստրատիվ աշխատանքի ավելացումը մտահոգություն է առաջացնում այս տարբերակի դեպքում. *«Հնարավոր է ունենալ 14 իրավաբանական անձ, բայց եթե մենք դառնում ենք ՀԿ կամ այլ մարմին, հարկավոր է լինելու այնքան լրացուցիչ հաշվապահական, հաշվետվական աշխատանքներ, եւ այլն: Դա մեզ կշեղի աշխատանքից»* (Կապանի Կենտրոնի համակարգող):

Ֆինանսական աղբյուրները

Կենտրոնների հետագա ֆինանսավորման խնդիրը մտահոգում է ոչ միայն Կենտրոնի ներկայացուցիչներին, այլև մյուս շահագրգիռ կողմերին: Բազմաթիվ հարցվողներ նշում են, որ Կենտրոնները այսպես թե այնպես հիմնական աջակցության կարիք ունեն, լինի դա ԵԱՀԿ-ի, պետական կամ այլ մարմինների կողմից, որպեսզի կարողանան ծածկել հիմնական գործառնական ծախսերը եւ ֆոնդեր կուտակել ծրագրային գործունեության համար: Միեւնույն ժամանակ, հարցվողների մեծ մասը հասկանում է, որ ֆինանսավորող մարմինը կարող է միաժամանակ հիմնական որոշումներ կայացնող մարմին դառնալ, այդ պատճառով զգուշությամբ է պետք վերաբերել ֆինանսավորման աղբյուրների հարցին. *«ով վճարում է, նա էլ երաժշտությունն է պատվիրում»* (Ա. Համբարձումյան, Խազեր ՀԿ): Կախվածության վտանգը հիմնականում կապվում է պետական ֆինանսավորման հետ. *«Ես կնախընտրեի, որ պետության կողմից ֆինանսավորում չկատարվեր, քանի որ ֆինանսավորման ծավալը ամեն դեպքում շատ չի լինելու, դրա փոխարեն վերահսկում է լինելու»* (Ա. Գաբրիելյան, ԲՆ): Նույնիսկ տարածքային կառավարման ներկայացուցիչները այն կարծիքն են արտահայտում, որ պետության կողմից ֆինանսավորումը կարող է վտանգել Կենտրոնների անկախ գործունեությունը. *«Եթե ֆինանսավորումը իրականացվեր մարզպետարանի կողմից, գրասենյակի իմաստը կկորեր, կնսեմանար, քանի որ այս կենտրոնը պետության եւ հանրության միջեւ կապող մարմին է»* (Հ. Գասպարյան, Շիրակի մարզպետարան):

Մյուս հարցվողները, այնուհանդերձ, պնդում են, որ պետությունը Օրհուս Կենտրոնների շահագրգիռ կողմերից մեկն է եւ պետք է նրանց գործունեության համար ֆինանսավորում ապահովի, որը նաև համասեփականության արտահայտման խորհրդանշային նշանակություն կունենա: *«Պետությունը, որը վավերացրել է Օրհուս կոնվենցիան, որոշակի պարտավորություններ ունի, եւ այդ պարտավորությունների կատարման համար պետությունը պետք է ծածկի Կենտրոնների ֆինանսավորման X տոկոսը»* (Գյումրիի Կենտրոնի համակարգող), *«պետական ֆինանսավորումը պետք է շարունակական լինի, ամեն տարի որոշակի բյուջե պետք է տրամադրվի: Մինչդեռ ԵԱՀԿ-ն եւ այլ կազմակերպությունները կարող են հոգալ Կենտրոնների ծրագրային ծախսերը»* (Երեւանի Կենտրոնի համակարգող):

Հարցվողների մեծ մասը հույս արտահայտեցին, որ ԵԱՀԿ-ն մյուս միջազգային կազմակերպությունների հետ միասին կշարունակի Կենտրոնների հիմնական ծախսերի ֆինանսավորումը: Կարելի է ասել, որ միջազգային աղբյուրները համարվում են Կենտրոնների ֆինանսավորման ամենաիրատեսական եւ վստահելի միջոցը, քանի որ նրանք հարաբերականորեն կայուն են եւ անկախ: Միեւնույն ժամանակ, ավելի նախընտրելի է նպատակային, քան դրամաշնորհային մրցույթների միջոցով ստացված ֆինանսավորումը. *«Դա նույնիսկ գրանտային ծրագիր չպիտի լինի, պիտի լինի հատուկ ծրագիր:... որպեսզի այն գնա նման մշտական ֆինասավորման ստեղծման վրա [...] Կենտրոնը չպետք է դառնա ՀԿ մրցակից, քանի որ դա անմիջապես խնդիրներ կառաջացնի: Օրհուս կենտրոնն պետք է ունենա իր՝ Օրհուս կենտրոնի պահպանման գրանտը, [...], Կենտրոնը չպետք է մրցակցության մեջ մտնի տաս կամ քսան հազարի համար, այլ պետք է միայն դրանով զբաղվի»* (Ի. Զարաֆյան, Էկոլուր ՀԿ):

Ինչ վերաբերում է այլ աղբյուրներին, ըստ ՀԿ-ի ներկայացուցչի, ՀԿ-ները պատրաստ կլինեն ներդրումներ կատարել Կենտրոնների ֆինանսավորման համար՝ օրինակ, սիմվոլիկ անդամավճարների տեսքով: Հանրային դրամահավաքը չի դիտվում որպես Կենտրոնների ֆինանսավորման էական աղբյուր. *«մարդիկ քրտնաջան աշխատում են ամեն 10 դրամի համար»* (Գավառի Կենտրոնի համակարգող):

Կենտրոնների համակարգողները որպես ֆինանսական եկամտի տարբերակ քննարկում են նաև վճարովի ծառայությունների տրամադրման հնարավորությունը, այդ թվում տպագրումը, պանձենահանումը, Ինտերնետ կապը եւ դահլիճի վարձակալությունը: Միջազգային կազմակերպությունից մի հարցվող առաջարկեց տուրիզմի հետ կապված բիզնես հիմնել, որը կարող է Կենտրոնների համար վճարովի ծառայության լավ հնարավորություն դառնալ:

Շահագրգիռ կողմերի դերը

Ինչպես նշվեց, հարցվողները հույս են տածում, որ ԵԱՀԿ-ն կշարունակի Կենտրոնների ֆինանսական աջակցությունը: Ֆինանսավորումից զատ, ԵԱՀԿ-ի դերը Կենտրոնների հետագա զարգացման գործում շատ է կարևորվում՝ Կենտրոնների գործունեության ընդհանուր աջակցության առումով: Հատկապես Կենտրոնների համակարգողները նշում են, որ նրանք չեն կարող պատկերացնել Կենտրոնների գոյությունը առանց ԵԱՀԿ-ի աջակցության. *«Ես չեմ կարող պատկերացնել այն իրավիճակը, երբ Կենտրոնը ԵԱՀԿ-ից դուրս լինի»* (Հրազդանի Կենտրոնի համակարգող): *«ԵԱՀԿ-ի իմիջը եւ ֆինանսավորումը վճարող են Կենտրոնների համար»* (Ս. Բաբախանյան, Հրազդանի քաղաքապետարան), *«ԵԱՀԿ-ի աջակցությունը անհրաժեշտ է, որպեսզի Կենտրոնները չփլուզվեն»* (Ա. Ղազարյան, Էկոլոգիական անվտանգության եւ ժողովրդավարության ՀԿ, Կապան): Հաշվի առնելով այն դերը, որ ԵԱՀԿ-ն խաղում է Կենտրոնների կյանքում եւ Կենտրոնների՝ ԵԱՀԿ-ի հետ շաղկապված իմիջը, անկասկած, կարևոր է պահպանել

ԵԱՀԿ-ի աջակցությունը՝ խորհրդատվության, միջամտության եւ դոնորության տեսքով, քանի որ մոտակա տարիներին դա Կենտրոնները հասուն եւ կայուն կազմակերպություններ դարձնելու հիմնարար պայման է հանդիսանում:

Ինչ վերաբերում է պետական կառույցների հետ համագործակցությանը, ԲՆ-ն եւ ՏԿՆ-ն նշվում են որպես Կենտրոնների գործունեության մեջ մեծ դեր ունեցող պետական մարմիններ: Մի կողմից, Կենտրոնները կարող են եւ պետք է վերահսկեն Օրիուս կոնվենցիայի իրականացումը պետության կողմից, մյուս կողմից, պետությունը ինքը պետք է շահագրգռված լինի Կենտրոնների ակտիվ գործունեության մեջ եւ տրամադրի ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը. *«նրանք պարտավոր են պարբերաբար տրամադրել շրջակա միջավայրի հետ կապված տեղեկատվությունը [...]: Տեղեկատվության տրամադրումը նս ներդրում է»* (Ս. Այվազյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլ), *«Կենտրոնը պետության խոսնակն է»* (Հ. Գասպարյան, Շիրակի մարզպետարան):

Այսպես թե այնպես, Կենտրոնների՝ որպես իրավական մարմինների ստեղծման գործում Կառավարության պաշտոնական մասնակցությունը, անհրաժեշտ է համարվում, առնվազն ըստ Կենտրոնների հիմնադրման մասին ՓՀ-ի դրույթների: Ինչ վերաբերում է տեղակայմանը, տարբեր կարծիքներ գոյություն ունեն այն մասին, թե արդյոք Կենտրոնները պետք է շարունակեն մնալ մարզպետարանների կամ տեղական ինքնակառավարման մարմինների շենքերում, թե տեղափոխվեն առանձին տարածք: Հարցվող համակարգողները ավելի շատ կողմ են արտահայտվում առանձին տարածք տեղափոխվելուն, թեև նրանցից երկուսը ասացին, որ խնդիր չեն տեսնում մնալ պետական հիմնարկի շենքում մնալու դեպքում, մինչդեռ երկուսն էլ պնդում էին, որ այդ տեղակայումը վտանգում է Կենտրոնների անկախությունը: ՀԿ-ի ներկայացուցիչը առաջարկեց խնդիրը դիտարկել այլ տեսանկյունից. *«տվյալ շենքը պետական իշխանությունների սեփականությունը չէ, այլ հանրային սեփականություն է, հետևաբար հասարակական կառույցները նույնպես իրավունք ունեն օգտագործել այդ տարածքը»* (Ի. Զառաֆյան, Էկոլուր ՀԿ): ՄԱԶԾ ՇՄՀՀ-ի ներկայացուցիչը առաջարկում է Կենտրոնների գտնվելու վայրի խնդրի երկարաժամկետ լուծում գտնել՝ նախընտրելով տարածք գնելու, այլ ոչ թե վարձակալելու տարբերակը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով ստացած բացահայտումները եւ դրանց վերլուծությունը՝ ՔԶՀՀ-ն առաջարկում է իրականացնել հետեւյալ քայլերը՝ որպէս Կենտրոնների հետագա զարգացման առաջնային գործողություններ:

Իրավական կարգավիճակը եւ Խորհրդի կազմը

- ✓ Կենտրոնները որպէս հիմնադրամ գրանցելը Կենտրոնների ապագա կարգավիճակի առումով ամենացանկալի լուծումն է: Որպէս առաջին քայլ առաջարկվում է ստեղծել համատեղ աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված կլինեն ԲՆ-ի, ԵԱՀԿ-ի եւ Օրհուս կենտրոնների ներկայացուցիչները՝ հետագա հնարավոր թյուրիմացությունները եւ թյուրըմբռնումները բացառելու նպատակով:
- ✓ Աշխատանքային խումբը կմշակի Հիմնադրամի կանոնադրության նախնական տարբերակը (ներառյալ կառուցվածքը, ՀԽ-ի կազմը, նպատակները եւ խնդիրները, հիմնադիրների եւ ՀԽ-ի հիմնական պարտականությունները ու պատասխանատվությունը եւ այլն), ինչպէս նաեւ գրանցման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր (ղեկավար սկզբունքներ, ընթացակարգեր եւ այլն): Այստեղ շատ կարեւոր է ապահովել, ինչպէս նաև օգնել բոլոր շահագրգիռ կողմերին հասկանալ, որ փաստաթղթերի մշակման ու հաստատման գործընթացը պետք է կատարվի համատեղ եւ հիմնված լինի կոնսենսուսի վրա:
Մշակված փաստաթղթերը քննարկելու եւ վերջնական տեսքի բերելու համար ՔԶՀՀ-ն առաջարկում է կազմակերպել Կենտրոնների ընդհանուր հավաք՝ նախարարությունների, տեղական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:
- ✓ Քանի որ ՀՀ օրենսդրության համաձայն անհրաժեշտ է առնվազն երեք հիմնադիրների առկայություն, մենք կառաջարկեինք որպէս հիմնադիրներ ընդգրկել Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, ԵԱՀԿ-ն (եթէ հնարավոր լինի) եւ մեկ ճանաչված էկոլոգիական կազմակերպություն, որը կերաշխավորի հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցչությունը: Կարող են դիտարկվել նաև ՄԱԿ-ի, ԲՀՀ-ի, էկոլոգիական դաշինքի այլ ներկայացուցիչներ: Եթէ ԵԱՀԿ-ն չկարողանա հանդես գալ որպէս հիմնադիր, առաջարկվում է հիմնադիրի դերում ներգրավել ՄԱԿ-ը:
- ✓ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կազմակերպության Խորհրդին եւ նրա կանոնակարգող մեխանիզմներին: Առավել նախընտրելի է ՀՀ կառավարությունը, ԵԱՀԿ-ն, տեղական ՀԿ-ները եւ միջազգային կազմակերպությունները ներկայացնող Խորհուրդը, կարելի է քննարկել նաև

գիտության եւ գործարարության ոլորտների ներկայացուցիչների մասնակցությունը: Ամենաօպտիմալը 7 մասնակիցներից բաղկացած Խորհրուրդն է, որը հնարավորություն է տալիս ընդգրկել բոլոր շահագրգիռ կողմերին: Որպես տարբերակ առաջարկում ենք հետեւյալ կազմ ունեցող Խորհուրդ՝

- Մեկ ԵԱՀԿ ներկայացուցիչ
- Մեկ ԲՆ ներկայացուցիչ
- Մեկ ՏԿՆ ներկայացուցիչ
- Մեկ էկոլոգիական ՀԿ ներկայացուցիչ
- ՀՀ Գիտությունների ակադեմիայի փորձագետ
- Միջազգային կազմակերպության ներկայացուցիչ (օրինակ, ԲՀՀ, WWF)
- Գործարար կառույցի ներկայացուցիչ:

Խորհրդի կարգերը եւ ընթացակարգերը մշակելիս պետք է նախատեսել, որ ՀԽ-ի անդամները երկու ժամկետից ավելի ընտրվելու իրավունք չունենան (մեկ ժամկետի առավելագույն տևողությունը երեք տարի է), իսկ նախագահի վերընտրման ժամկետը առաջարկվում է սահմանել յուրաքանչյուր երեք տարին մեկ: Դա հնարավորություն կտա պահպանել ուժերի հավասարակշռությունը եւ խուսափել իրավասությունները չարաշահելու վտանգից:

Նաեւ առաջարկվում է, որ բոլոր կենսական որոշումները ընդունվեն Խորհրդի կողմից միաձայն սկզբունքով, իսկ ռազմավարական նշանակության մյուս որոշումները՝ ձայների 2/3 մասով:

- ✓ Օրհուս կենտրոնն հիմնադրամի կառուցվածքը պետք է միասնական լինի՝ իր մարզային ներկայացուցչություններով, քանի որ ներկա իրավիճակում դա կլինի ամենալավ տարբերակը մի կազմակերպության համար, որը պետք է հոգա իր սեփական ֆինանսավորման, անկախության եւ երկրում իր ազդեցության հարցերի մասին: Մենք առաջարկում ենք ունենալ առանձին վարչարարական մարմին (հավանաբար Երեւանում, որտեղ գտնվում են հիմնական շահագրգիռ կողմերը եւ համագործակիցները), որը կիրականացնի ֆինանսական կառավարումը, ընդհանուր վարչարարական գործողությունները, մարդկային ռեսուրսների կառավարման եւ հասարակայնության հետ կապերի գործառույթները, մինչեւ Կենտրոնները անմիջականորեն կիրականացնեն ծրագրային գործունեությունը եւ ծառայությունների տրամադրումը: Միեւնույն ժամանակ վարչարարական մարմինը կարող է խորհրդատվական եւ տեխնիկական աջակցության դերում հանդես գալ:

Պլանավորում եւ կառավարում

- ✓ Պետք է մշակել մեկ ռազմավարություն, տեսլական եւ առաքելություն, որը կողողորդի նոր կազմակերպությունը եւ Կենտրոնների գործունեությունը ավելի քիչ կախված կլինի համակարգողի անձից եւ փորձից: Ամենանախընտրելի տարբերակը Կենտրոնների եռամյա ռազմավարական պլանի մշակումն է, որը կներառի հստակ ձևակերպված առաքելություն, տեսլական, ռազմավարական նպատակներ, ֆոնդահայթայթման կարիքները եւ հնարավոր միջոցները:
- ✓ Օրիուս կոնվենցիայի իրականացման ազգային պլանը կարող է Օրիուս կենտրոնների գործունեության ուղղորդման կարեւոր նախապայման դառնալ. այս պլանի մշակումը, լոբիինգը եւ իրականացման աջակցությունը, պետք է ներառվեն ռազմավարական պլանի մեջ որպես Կենտրոնի ռազմավարական նպատակներից մեկը:
- ✓ Կենտրոնի ռազմավարությունը կօգնի հստակեցնել Կենտրոնի դերը եւ գործունեության շրջանակները, քանի որ բազմաթիվ հարցեր կան, որոնք տարբեր տեսանկյուններից են դիտվում շահագրգիռ կողմերի եւ կենտրոնների կողմից, հատկապես «արդարադատության հասանելիությունը» գործառույթի մեկնաբանությունը եւ ընդհանուր առմամբ խնդիրների լուծման ուղղությամբ գործնական միջամտությունների եւ հակառակ կողմում՝ զուտ իրազեկման ու քննարկումների պլատֆորմ հանդիսանալու միջեւ բալանսը:
- ✓ Նորաստեղծ կազմակերպության եւ յուրաքանչյուր Կենտրոնի (մասնաճյուղի) համար հարկավոր է զարգացման պլան մշակել, որը սահուն անցում կապահովի դեպի նոր կառուցվածք եւ նոր միջավայր: Պլանները պետք է ներառեն բոլոր Կենտրոնների զարգացմանն ուղղված ընդհանուր գործողություններ, ինչպես նաեւ հասցեագրեն յուրաքանչյուր մարզին բնորոշ կարիքները: Առաջարկվում է, որ առաջին տարվա պլանները կենտրոնացվեն կազմակերպության եւ Կենտրոնների ներքին կարողությունների եւ կանոնակարգերի զարգացման, ինչպես նաեւ ցանցերի զարգացման եւ վերաձևավորման ուղղությամբ:

Մարդկային եւ նյութական ռեսուրսներ

- ✓ Բոլոր համակարգողները պետք է վերապատրաստվեն նոր կազմակերպության առանձնահատկությունների հետ կախված մի շարք ոլորտներում, ներառյալ ֆինանսական, կազմակերպչական եւ աշխատակազմի կառավարումը, լիդերությունը, հաշվետվությունների կազմումը, հիմնական իրավական պահանջները, հասարակայնության հետ կապերը եւ հաղորդակցությունը: Յուրաքանչյուր Կենտրոնում նաեւ հատուկ վերապատրաստում պետք է անցկացվի շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում՝ ելնելով Կենտրոնի պահանջներից եւ հայտերից, որոնք հիմնականում կապված են շրջանի համար հատուկ խնդիրների հետ:

- ✓ Անհրաժեշտ է սահմանել կատարողականի գնահատման համակարգ՝ Կենտրոնների համակարգողների եւ մյուս աշխատակիցների կատարողականի հստակ ձևակերպված չափանիշներով եւ նպատակներով: Չնայած ներկա համակարգողները ակտիվ եւ պատասխանատու անձնավորություններ են, սա կօգնի ստեղծել իրենց կատարողականության վերահսկման ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչպես նաեւ կապահովի Կենտրոնների կատարողականության արդյունքները չափելու հիմքեր:
- ✓ Կամավորների կառավարման ընթացակարգերը՝ ներառյալ կամավորների հավաքագրման, ամենօրյա կառավարման, նրանց շահագրգռելու եւ գնահատման մեխանիզմները, կօգնեն ավելի արդյունավետ կերպով օգտագործել կամավորների աշխատանքը եւ հենվել կամավորների վրա որպես կազմակերպության մարդկային ռեսուրսների մաս, որը կօգնի ինչ-որ չափով լուծել սահմանափակ աշխատակազմի խնդիրը:
- ✓ Փորձագետների խորհուրդը պետք է պահպանել տեղական մակարդակում՝ որպես տեղական շահագրգիռ կողմերի ներգրավման եւ խորհրդատվական աջակցության արդյունավետ միջոց: Այդուհանդերձ, Խորհրդի կառավարման մեխանիզմները պետք է վերանայվեն, ավելի իրատեսական կազմ եւ հանդիպումների ժամանակահատված սահմանվի, որի միջոցով այն կդառնա իրականում ակտիվ եւ արդյունավետ մարմին: Միեւնույն ժամանակ, եթե ստեղծվի մեկ հիմնադրամ, Փորձագետների ներկա խորհուրդներին պետք է հստակ տեղեկացնել, որ իրենց դերը որոշումների կայացման գործընթացում լինելու է խորհրդատվական: Փորձագետների խորհրդի համար անհրաժեշտ կլինի մշակել եւ կիրառել մոտիվացիոն մեխանիզմներ:
- ✓ Առաջարկվում է բարելավել Կենտրոնների տեխնիկական բազան՝ ներառյալ շարժական համակարգիչներով, պրոյեկտորներով, ֆոտոխցիկներով, տպիչներով ապահովումը, կամ առնվազն փորձել հավասար մակարդակի բերել այս բնագան տարբեր Կենտրոններում: Տրանսպորտային միջոցների գնման հնարավորությունը պետք է հաշվի առնել այն Կենտրոնների համար, որոնք գործ են ունենում մարզի հեռավոր հատվածների հետ (օր. Գավառ, Կապան): Տվյալ հարցի հնարավոր լուծում կարող է լինել խոշոր ընկերություններից եւ/կամ միջազգային զարգացման գործակալություններից որպես ներդրում տրանսպորտային միջոցներ ստանալը:

Ֆինանսավորման աղբյուրներ եւ դրամահավաք

- ✓ Երաշխավորված հիմնական ֆինանսավորումը անհրաժեշտ է Կենտրոնների ինքնուրույն գործունեության առաջին շրջանի համար, քանի դեռ նրանք դրամահավաքման հնարավորություններ եւ փորձ չունեն: Արդյունավետ լուծում

կարող է լինել նվիրատվության հիմնադրամի (endowment fund) ստեղծումը, որը հնարավորություն կտա ծածկել աշխատակազմի եւ կառավարման հետ կապված ծախսերը:

- ✓ Միջազգային կազմակերպությունների դրամաշնորհները եւ պետական աջակցությունը դիտարկվում են որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր , միեւնույն ժամանակ Կենտրոնների գործառնական ծախսերի համար ֆինանսավորման մեկ ընդհանուր ֆոնդի ստեղծումը կօգնի ֆինանսավորումը Կենտրոնների որոշակի գործունեության հետ չկապել՝ ավելի շատ ինքնուրույնություն եւ անկախություն ապահովելով որոշումներ կայացնելու ժամանակ: Մյուս կողմից, յուրաքանչյուր Կենտրոն կարող է ֆինանսավորվել՝ ելնելով կենտրոնական գրասենյակի կողմից տվյալ Կենտրոնի գործունեության եւ ստացած արդյունքների գնահատումից:
- ✓ Հարկավոր է ի նկատի ունենալ նաև տեղական բիզնեսի կողմից ֆինանսավորումը, քանի որ դա ֆոնդերի բազմազանեցման, տեղական ֆինանսավորման զարգացման, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության եւ գործարարների կողմից բնապահպանական խնդիրների հանդեպ ավելի գիտակից մոտեցուման խթանման լավ տարբերակ է: Քանի որ շատ գործարար ընկերություններ՝ համաձայն օրենսդրության դրույթների, պարտավորություններ են ստանձնել որոշակի ֆոնդերի միջոցով աջակցել բնապահպանական խնդիրների լուծմանը, այս հնարավորությունը պետք է օգտագործվի Կենտրոնների կողմից՝ թե այս ֆոնդերը առավել նպաստավոր ուղղություններով օգտագործելու համար, թե որպես Կենտրոնների գործողունեության ֆինանսավորման տարբերակ: Այս ոլորտում համապատասխան վերապատրաստում է անհրաժեշտ:

Հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ

- ✓ Կենտրոնները համագործակցություն են հաստատել տեղական եւ ազգային ՀԿ-ների հետ. առաջարկվում է շարունակել այս հարաբերությունների զարգացումը եւ ցանցերի կերտումը բնապահպանական ոլորտում գործող ՀԿ-ների ու պետական եւ գիտական այլ կազմակերպությունների հետ՝ օգտագործելով գործնական կապերը Կենտրոնների հասարակայնության հետ կապերի, դրամահավաքի եւ ծառայությունների տրամադրման համար:
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցային հարաբերությունների հաստատումը շատ կարեւոր է՝ մի կողմից ինքնուրույնությունը պահպանելու, մյուս կողմից տեղական որոշումներ կայացնող մարմինների մասնակցությունը ապահովելու համար, հետեւաբար Կենտրոնները պետք է հստակ սահմանեն տեղական եւ տարածքային

կառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակները (ոչ վերահսկում, ոչ էլ ենթարկում, այլ գործընկերություն), որպեսզի բացառվի որևէ թյուրըմբնում: Հստակ ձեռակերպված ՓՀ-ը կօգնի ինստիտուցիոնալ հիմք ապահովել նման հարաբերությունների համար:

- ✓ Ինչ վերաբերում է ԲՆ-ի հետ հարաբերություններին, Հիմնադրամի ստեղծումը՝ տարբեր կողմերի ընդգրկմամբ, եւ հաջորդ տարվա համար սահմանված նպատակներ եւ խնդիրներ պարունակող ռազմավարական պլանի մշակումը կօգնի բացառել Օրհուս կենտրոնների կարգավիճակի եւ գործունեության շրջանակների վերաբերյալ տեսլականների տարբերությունը: Նախարարությունը կշարունակի իր խորհրդատվական եւ տեղեկությունների տրամադրման դերը, ինչպես նաեւ ներգրավվածությունը Կենտրոնների որոշումների կայացման մարմնի կազմում:
- ✓ ԵԱՀԿ-ի աջակցությունը կենսական է Կենտրոնների հետագա գործունեության համար ոչ միայն որպես ֆինանսավորող կազմակերպություն, այլ առավել եւս որպես խորհրդատու եւ աջակից: Թեև կենտրոնները հեղինակություն են ձեռք բերել տեղական համայնքներում, Օրհուս կենտրոնների կապը ԵԱՀԿ-ի իմիջի հետ, ինչպես նաեւ ԵԱՀԿ-ի աջակցությունը միջազգային նորմերի եւ ստանդարտների պաշտպանության գործում կխթանեն Կենտրոնների աշխատանքի արդյունավետությունը եւ նրանց դիրքը տեղական եւ միջազգային համայնքների միջավայրում:

Գործունեության շրջանակները

Թեև Օրհուս կենտրոնների առաքելությունը եւ նպատակները սահմանված են միջազգային փաստաթղթերում, կան լրացուցիչ գործառույթներ, որ Հայաստանի Օրհուս կենտրոնները կարող են իրականացնել եւ արդեն իսկ ինքնաբերաբար իրականացնում են:

- ✓ Ակնհայտ է, որ Կենտրոնները ծառայում են ոչ միայն որպես էկոլոգիական իրավունքի տեղական գործակալներ, այլև, հաշվի առնելով որոշ մարզերում ՀԿ-ների թույլ դերը, ինչպես նաեւ իրազեկվածության եւ իրավունքների պաշտպանության անբավարար մակարդակը, հանդես են գալիս տեղի բնակչության իրավապաշտպանի եւ կրթողի դերերում: Ինչ-որ իմաստով, նրանք ներկայանում են որպես քաղաքացիական հասարակության մոդել եւ հանդես են գալիս՝ մարզային եւ համայնքային մակարդակներով, քաղաքացիական զարգացվածության «կատալիզատոր»:
- ✓ Կենտրոնները իրականացնում են տեղական եւ ազգային կազմակերպությունների համար տարբեր միջոցառումներ եւ ռեսուրսների կենտրոն են ծառայում ոչ միայն բնապահպանական, այլ նաև մյուս

կազմակերպությունների համար: Այսպիսով, նրանք կարող են կիրառել միջոցառումների կազմակերպման եւ տեղեկատվության գործակալներ հանդես գալու իրենց փորձն ու հմտությունները միջազգային, տեղական եւ պետական կազմակերպությունների համար: Դա կօգնի իրենց լրացուցիչ ֆինանսավորում ստանալ վարչարարական ծախսերը ծածկելու համար եւ ավելի մեծ ճանաչում ստանալ տեղական եւ ազգային մակարդակներում:

- ✓ Պետական եւ մարզային բնապահպանական ծրագրերի մոնիտորինգը մեկ այլ ոլորտ է, որտեղ Կենտրոնները կարող են կարելու դեր խաղալ: Բացի այդ, այն մարզերում, որտեղ կան այնպիսի խոշոր կորպորացիաներ, ինչպիսին հանքարդյունաբերական ընկերություններն են, Կենտրոնները կարող են վերահսկել այդ ընկերությունների բնապահպանական նպատակներին ուղղված հատուկ ֆոնդերի ծախսերը:
- ✓ Հաշվի առնելով Կենտրոնների դերը, իմիջը եւ ներուժը՝ կարելի է դիտարկել նաև բնապահպանական ոլորտից դուրս փոքրածավալ գործունեության աջակցության հնարավորությունները: Դա կարող է լինել տեղեկատվության տարածում եւ հավաքագրում, Երեւանում գտնվող համապատասխան կազմակերպությունների համար տեղական համակարգող կենտրոնի դերի ստանձնում (օր. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար) կամ նման այլ գործունեություն:

Հիմնվելով առկա բացահայտումների եւ առաջարկությունների վրա՝ կմշակվի և ԵԱՀԿ-ի եւ այլ շահագրգիռ կողմերի հետ կքննարկվի Կենտրոնների հետագա զարգացման գործողությունների պլանը՝ Կենտրոնների ինքնավար եւ արդյունավետ գործունեության ուղղությամբ բոլոր անհրաժեշտ քայլերը կատարելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցվողների ցանկ

Հարցվող	Կազմակերպություն	Պաշտոն
1. Անուշ Էվոյան	Ալավերդիի Օրհուս Կենտրոն	Համակարգող
2. Լիանա Ասոյան	Գավառի Օրհուս Կենտրոն	Համակարգող
3. Գեորգ Պետրոսյան	Գյումրիի Օրհուս Կենտրոն	Համակարգող
4. Աշոտ Ավագյան	Կապանի Օրհուս Կենտրոն	Համակարգող
5. Էդգար Ենգիբարյան	Հրազդանի Օրհուս Կենտրոն	Համակարգող
6. Ռեյ Ռիդեր	Հրազդանի Օրհուս Կենտրոն	Կամավոր
7. Սիլվա Այվագյան	Երեւանի Օրհուս Կենտրոն	Համակարգող
8. Սիմոն Պապյան	Բնապահպանության նախարարություն	Նախարարի տեղակալ
9. Արամ Գաբրիելյան	Բնապահպանության նախարարություն	Բնապահպանության վարչության պետ
10. Աշոտ Գիլոյան	Տարածքային կառավարման նախարարություն	ՏԻՄ վարչության պետ
11. Գոհար Ղազինյան	ԵԱՀԿ	Բնապահպանական ծրագրերի պատասխանատու
12. Համլետ Գասպարյան	Շիրակի մարզպետարան	Գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի բաժնի գլխավոր մասնագետ
13. Սեյրան Ավետիսյան	Սյունիքի մարզպետարան	Տարածքային կառավարման վարչության պետի տեղակալ
14. Կամո Թումոյան	Կոտայքի մարզպետարան	Բնապահպանության բաժնի պետ
15. Ազատ Խաչատրյան	Գյումրիի քաղաքապետարան	Բնակկոմունալ եւ շրջակա միջավայրի բաժնի գլխավոր մասնագետ
16. Սուսաննա Բարսիսանյան	Հրազդանի քաղաքապետարան,	Գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի բաժնի առաջատար մասնագետ
17. Ինգա Զարաֆյան	Էկոլուր ՀԿ	Նախագահ
18. Ամալիա Համբարձումյան	Խազեր ՀԿ	Նախագահ

19. Վլադիկ Մարտիրոսյան	Խուստուփ ՀԿ (Կապան)	Նախագահ
20. Արթուր Ղազարյան	Էկոլոգիական անվտանգություն և ժողովրդավարություն ՀԿ (Կապան)	Իրավախորհրդատու
21. Սեյրան Մարտիրոսյան	Մախարովայի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, Շիրակի մասնաճյուղ	Մասնաճյուղի ղեկավար
22. Սոնա Այվազյան	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն	Նախագահ
23. Հովհաննես Ղազարյան	ՄԱԿ-ի ՇՄՀՀ փոքր դրամաշնորհների ծրագիր	Ազգային համակարգող
24. Կարեն Մանվելյան	ԲՀՀ Հայաստան	Տնօրեն